# ԳՐԻՖՖԻԼՅԱՆԻՆ



Ողորմյարդու զայ ի հզոր
Աստ նորոգում զրա այսոր

# ԴՐԽՍՏԻՆԵԱԿԱՆ

ԱՆԱՆԱՍԻՆ
Տ. Սոչրրի Դպրոց
— 1843 —



# ԳՐԻՍՏՈՆԼԻԱՆ

## ՔԵՐԹՈՒԱԾ

Ի Հ. ՄՈՎՍԻՍԷ Վ. ԱՄՊԷՐՊՕՅԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1843

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆՎԱԾԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

A/893

# ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ՎԵՀԱՔՆ

Ի ԽՈՒՆ վաստակ հէք Մուսայիս
Ներողամիտ թէ հայիս,
Քան թառամոտ յոլորս դաբնեաց
Ճակատ նորուն պերճ փայլեաց։
Ոչ գիւցազանց յարարս պատիր
Վատնեաց զաշխոյժս առաւիր,
Այլ ոյր անմահ կայ յիշատակ
Դրոշմեալ յերկնից պարունակ։
Ի սոյն օճան և զիւրն յուսայ
Գործել անմահ հէք Մուսա
Ոչ լոկ զանուանն, այլ և զարդիւնս
Քեզ ԻՍԿՈՒՀԻՈՑԴ ձօնեալ ՏԻՒՋ։

Անուանդ անմահ կոփել արձան,
Ճարտար մատին էր արժան.
Յաւերժասցի թող յիմ կիթառ,
Ցորչափ գրեանոյս հընչէ տառ։



# ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Անուն իսկ քերթուածոյս հետաքնին առնէ զընթերցանելիս, թէ ընդէր արդեօք զայս կալաւ իւր նպատակ քերթողն, ուր բիւրք գոյին այլ դէպք յարմարագոյնք յազգայնոցս, և՝ ի սրբազանից և յարտաքնոց. այլ որք մի անգամ զգածեալ ի ցեն աշխուժիւ քերթողութեան յանձանց իսկ կարող են խելամուտ լինել այսմ, թէ յոր ինչ և վառեսցի աշխոյժս այս, այն նմին պատուական, նոյն և յարմարագոյն ձկտութեան մտաց։ Ի սոյն գոդցես և մեք ըմբռնեցաք. անցանելով ընդ վարս սրբուհւոյն ևեթ այնքան բորբոքեցան իղձք և աշխոյժք մեր, մինչև փորձ մի փորձել կամեցեալ սկսաք մեզէն և թո-

զաք, բայց 'ի կատարումն ածել այլք ստիպեցին, և առաւել 'ի լոյս ընծայել:

Ոչ իբրև գործ կատարեալ, այլ գոյզն ճաշակ ընծայեմք համարուեստ եղբարց. զի զայս արուեստ որչափ ոք և յղկեսցէ, այնչափ դեռ յղկութեան կարօտի:

Ի վարուց սրբուհւոյն գրեթէ ոչ ինչ իւիք խոտորեցաք, զի մի յառաստպելս կործանեսցուք, որով և զմերոց կրօնից զհրաշալիս խանգարեսցուք: Ի նիւթոց պատկերացն, եթէ ոք միայն ընթերցցի, բազում ինչ ակնկալէ քան զբուն գրեալսն. զգոյն և ես խոստովանիմ. այլ զթուիչ գրչիս վհատեցոյց կարճեաց նիւթոյն չափաւորութիւն և ճշմարտութիւն:

# ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋՆՈՅ ԵՐԳՈՅՆ

ՏԱՂՏԿՈՒԹԻՒՆ քերթողին յարտաքնոցն քերթածաց 'ի սէր Անմահին վառեալ, զքանչելի զօրութիւնս երգէ 'ի սրբուհին Քրիստինէ։ Ծնունդ նորա և նուիրումն 'ի մշանջենաւոր պաշտօն դէց յաշտարակի։ Խղճահարութիւն կուսին 'ի խնկարկութեան. արհամարհեալ զդիս երթեալ նստի առ պատուհանն 'ի մուտս արևու։ Խորհրդածութիւն արարածովքն 'ի վերայ Ճշմարտին Աստուծոյ. յիշելով զտանջանս վկայիցն մաղթէ զնոցայն բարեխօսութիւն առ Աստուած վասն իւր։ Երևումն և քաջալերութիւն փրկչին։ Հալածումն դիւաց և զայրոյթ սադայէլի 'ի տես սքանչելեացն. լուտանք նորա առ Աստուած և յորդոր առ իւրսն։ Զարթնուլ կուսին յեւ արևուն և ընդ արա-

ըածս գոհութեան մատուցանել տեառն։ Գալուստ հօրն 'ի տես դատերն, և ամբաստանութիւն պաշտօնակցացն. ցածնուլն նորա 'ի հոմաձայն բանից դատերն։ Փչել կռոցն. զայրոյթ հօրն, և գանահարութիւն և շղթայակապ արկումն նորա 'ի բանտ։ Գալուստ մօրն և դարձն ունայն։ Մահ Սելինեայ և ողբ նորա 'ի Քրիստինեայ։ Երևումն հրեշտակին իւրոյ և լուսով նկարագրութիւն անօրինականաց փրկչին։ Փղձկումն նորա առ Աստուած, և 'ի տքնութենէ նուաղումն և նինջ։

# ԲՐԻՍՏԻԼԻԱՆ

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Սուտ Ողիմպոս սուտ է Մուսա,
Յաստեղատունս գլորեալ կայ.
Մինչ որ յառեալ զերկինս դիտէ,
Զերկիր թողեալ 'ի բացէ,
Հաստչին թռուցեալ ըզգահոյիւք
Անմահութեան ծրծէ սիւք։
Լքեալ սրտի չեն զովարար
Ոչ հովանիք ոչ նեկտար.
Ո՛հ իմ աւուրց, սրացեալ անցին
Զիարդ ընդվայր 'ի նոսին։

Առ քեզ Տէր իմ, առ քեզ Աստուած
Աղբիւր ջրոյդ իմ կենաց,
Անձն իմ նեղեալ յերկինս յերկրէ
Տարփմամբ սրտի փափաքէ։
Յարարածոց ելեալ խնդիր,
Շաղախեցայ 'ի պատիր,
Եւ յորսողաց հարայ վերօք,
Ինձ մխիթար չեղև ոք։
Զի ոչ մայրեաց վեհ հովանիք
Եւ ոչ հաւուց դայլայլիկ,
Աղբերականց ոչ վազք ըշտապ
Ոչ շինջուցին սրտիս տապ։
Դու Արարիչ, դու ես Աստուած,
Ըսփոփութիւն իմ վշտաց,
Քեզ 'ի խնդիր ելեալ սիրտ իմ
Ի սէր սիրոյդ տոչորիմ։
Ո՜հ, թէ յանկարծ զիմ ըզլեզու
Քոյոց փառացդ օրհնէրգու
Քեզ ընտրեիր 'ի տաւիղ սուրբ,
Ըստ մաքրելոյն 'ի քէն հուրբ,
Խօսել ըզքէն ինձ քաղցրանայր,
Այլ ես գործի եմ տրկար։
Ո՛վ Հրաշատակ իմ պահապան,
Իմոց միտացս ուսուցիչն,

Ի հոլաթևս առ զիս 'ի քոյ
Անցից երկրիս 'ի վերոյ.
Յաւերակաց բանաստեղծից
Սոլերս ագոյց վեր էլից,
Զ' իմոց տաղից վեհ նրպատակ
Երկնից 'ւ երկրի հեղինակ:
Այլ իմ եղուկ նրբին թևոց
Զի խանձոտէ հրատին բոց,
Ի ծայր լերին գոնեայ տար զիս,
Զի մի՛ աղմուկ կենցաղիս,
Քաղցրը երգոյս արկցեն խափան,
Մաղթեմ 'ի քէն, ո՛վ Պահպան:
Թէ օրհնաբանք ոչ պակասին
Վեհք 'ի վեհից Արարչին,
Ըզզօրութիւնս յիւր 'ի պատկեր
Արկից փողոյս 'ի կերկեր:
Թէ արարածք են վեհ քարոզ
Ըստանչելեաց մշտախօս,
Սաղմոսողին հոգենրւագ
Մեզ քարոզեն անսուտ բանք 1:
Յարարածոց ես գերազանց,
Հոգի շնչեալ 'ի բարձանց,
Զըստանչելիս տեսեալ հրաշից
Ես բանականս լուռ կացից:

Քեզ Արարչիդ ամենարուեստ
Քոյովքդ հիւսեմ քեզ գովեստ.
Երկինք երկիր քոյոց ձեռաց
Խոստովանին արարած.
Ձեր դիմադարձ յերկրի 'ւ երկնի
Ամենազօր քո ձայնի.
Տիեզերացս այս համօրէն
Դու 'ի բարձանց տընօրէն,
Ի սէր միոյ արարածոյ
Վէհիդ 'ի տիպ եղեալոյ,
Ընդդէմ զինեաս զերկինս երկիր,
Ըաքանչելեաց արհաւիր.
Լերինք 'ի ձոր, ձորք 'ի լերինս,
Մարգագետինք 'ի ծըփինս,
Ձրկունք յայերս թռուցեալ ճախրին,
Բընակք մայրից 'ի ծովին.
Արջ և առիւծ գազանք վայրի
Զօրէն հաւուցն ընտանի
Ձրմեղանչեն քոց սիրելեաց
Ակնարկութեամբ քո կամաց:
Երկաթ և հուր ամենածախ
Քև լուծանին 'ի գազախ.
Տարերք ըմբոստք ըզգօնանան,
Մինչև լցցի քո հրաման:

ԸՍՓԱՆՁԵԼԵՑՑ քոց, Տէր, քարոզ
Կացցէ այսօր մեզ Տիւրոս.
Աղէ պատմեա, զի՞նչ Անմահին
Ի քեզ հրամանք գործեցին.
Արդանդ ամուլ բիւրաբեղուն
Երկնից հարսին եղև տուն։
Ըզքո ընտրեալդ 'ի սկզբանէ
Հրաշից կընիք ցուցանէ.
Աբքայազարմ ընտրեցեր մայր
Նըմին տաճար վեհավայր.
Նա անծանօթ ձեռաց քոյին,
Շընորհ գըրէր զայն բաղդին.
Ոչ կենաց մանկանն ընծայաբեր
Ոչ անշունչ ըզդիս պաղատէր.
Պարգևատու կարծէր զԴիոս
Եւ հայր մանկանն Ուրբանոս.
Անշունչ կըռոց մոլեալն 'ի սէր,
Ըզկոյսն ուխտէր 'ի նըւէր,
Ամբծուութեամբ 'ի մեհենի
Պաշտել զաստուածս ըստ դենի։
Եւ մայր նորին խանդաղատեալ
Ի գեղ գիմացն հրաշափայլ,
Յաստուածուհեաց կարծէր նա զոք
Ծածկեալ նորին ընդ գիմաք։

Այսպէս զալ քո ոչ ծանեան, Տէր,
Որ 'ի նոսին ներգործէր.
Մինչ օրհորդն աճէր 'ի տիս
Յապուշ կրթէր զտիւրացիս,
Իմաստութիւն և գեղ դիմաց
Գէր քան ըզկարդ մահացուաց։
Զուր թագաւորմ դուք պարմանիք
Ի սէր նորին հարկանիք,
Է նրուիրեալ անձն այն չքնաղ
Պաշտել ըզդիս անրզբաղ,
Զի յանդրգնիք դուք անմահից
Լինել նոցին բարձակից։
Տէր հրաշեցդ է պահել ըզքոյդ
Ի բրունութեանց անրատդիւտ.
Ի չարութեան որսալ ըզմարդ
Ի հրաշից քոց 'ի թակարդ,
Այդ քո ևեթ սիրոյդ է գործ
Ի բընութեանս բազմափորձ։
Ուրբանոսի և աստ, դու Տէր,
Խորհուրդ 'ի միտ զայս արկեր,
Քեզ հարսն անփորձ պահել ըզնա
Մրտաբերել ակամայ։
Մեհեան կառոյց բարձրագիտակ
Եղից իրացն անգիտակ,

Նովիմբ հաճել ըզդիս կարծէր
Պաշտօնատար սրբանուէր
Կարգեալ զաղջիկն անապական
Իբր ըզկուսանսն վեստեան 2 :
Օրիորդաց վեցից կրկին
Եդ գործակից առ նրմին,
Յանչէջ պահել ըզսիրոյն բոց
Զատաւ աղջիկն յերկրայնոց :
Դիւաց բանակ անագորոյն
Ի բազմագէմ կոփածոյն
Մտեալ պաշտի յօրիորդէն,
Այլ նա հարաւ 'ի խղճէն :
Որ զքաջութիւնս ոչ տաս այլոց,
Եւ ոչ ըզփառս դրօշելոց,
Ըզնիզակ կուսին դու զարթուցեր
Գալ ընդ նրմին 'ի վրսեր :
Անշունչ պատկերքս յոսկեղինաց,
Անշուշտ սոքին չեն Աստուած :
Շրջեցաւ միտք օրիորդին,
Եհար ըզխունկն 'ի գետին.
Թուք արձակեալ ցասմամբ մեծաւ,
Ծաղրեալ ըզկուռս, ըսկըսաւ
Կուրացելոց կարդալ աւաղ,
Եւ աստուածոց դիւաբախ.

Ա/843
ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Եվ զայրագին փախեաւ անտի
Վիրաւորեալ 'ի սրտի.
Ձեռք 'ի ծնօտի, յաչս արտասուք
Ընկղմեցաւ 'ի խոր սուգ։
Աչ բարձրեալ, չանկաւ 'ի զուր
Ի սիրտ մանկան սիրոյդ սուր,
Վիրաւորեալ Նա թաղկացաւ,
Այլ ոչ առթեաց նրմին ցաւ.
Ահա եվ նա զբաւրթերես
Ի կապուտակ ասպարէս,
Յառեալ 'ի գեղ արեգական
Որ զերթ ըզհարսն աննման
Քօղ լուսափիւռ արկեալ զիւրեաւ,
Մրտեալ 'ի ծով ծածկեցաւ,
Ոյր հանդերձից գեղոյն նրշոյլ
Քարշէր ձրգէր զաստեղց բոյլ.
Աստեղք յեթերս մեծ դրշխոյին
Կային գոգցես 'ի զրնին։
Փայլէր և անդ 'ի հանդիպոյ
Երկրորդ դրշխոյն գիշերոյ.
Ի տես սոցին կրթեալ յապուշ,
Արձանացաւ իբր անյուշ,
Արծաթափայլ զիրերաց հետ
Ակնք գային վէտ 'ի վէտ,

Իբրև վարսամ նըշոյլ լուսնոյն
Զաչս հարկանէր ապշելոյն։
Յուշի եղեալ ծանեաւ զիւր բաղդ,
Կարդայր անձին ապերախտ.
Ցայսվայր ընդէր անմրոտացար,
Քո ըստեղծիչ փա՞յտ և քար.
Զիցէ՞ լաւ խոտ վաղաթառամ
Քան ըզսոսա բիւր անգամ,
Մինչ թալկանայ նա գըլխիվայր,
Ջուր պաղատի ոչ ընդվայր,
Այլ էլանէ երկինք ցողով,
Հովանացեալ մերթ ամպով։
Ես անշըշունչ քարանց փայտից
Խօսուն պաշտօն էր հարից.
Սոցին երկիրս է սընուցիչ,
Եւ դիւահաբ մարդ կոփիչ,
Քան զաստուածս իմ տեսիլս չըքնաղ
Զիցեն յարգի, ինձ աւա՜ղ.
Սոքա աստուած այլ ճանաչեն,
Ես քան զսոսա գեղաշէն
Պաշտօն տանիմ անարդելեաց,
Տի՛ օն անդր ա՛ռ 'ի բաց,
Իմաստութեան պէտք են մրթելք,
Չի կանգնեացին տիեզերք։

Եւ ոչը լցեն կընիք հրաշից
Ի դէմս բերեալ ամենից,
Տարերք անբան գերերջանիկ,
Զէն ճշմարիտ դաւանիք։
Ո՛վ դու լուսին արծաթափայլ,
Հան 'ի սրտէս զայս մրուայլ.
Եւ դուք կոհակք, մինչ 'ի համբոյր
Գըլիք ափանցս 'ի պարոյր,
Պատմեցէք ինձ, ո՞ 'ի հանդէս
Ձերոց խաղուց կայ 'ի տես։
Եւ դու երկին, դու բազմաչէայ
Հիքացելոյս ակնարկեա։
Ոչ վայրապար յանձն առնուին 3
Ըզխիստ տանջանսն ահագին
Ճըշմարտասէր այն քրիստոնեայք,
Ծերք և մանկունք, դերդ կանայք,
Նահատակեալ նոքին անուամբ
Յերկնից նստին պատըշգամբ։
Ազէ անկցին դուքք ձեր ընդ խս,
Ահա թոզն ես ըզդիս.
Զհաւատս անբիծ ըզՔրիստոսին
Ձեր ուսուցէք մարտակցին։
Իմ գունեցան աչք 'ի կարմիր,
Բնութիւն հանայն կայ 'ի նիրհ։

Ձեր արքային խանդակաթ եմ
Կալ յանդիման պսակաձեմ.
Դուք 'ի մարմնի յորդորէիք
Զաստուածանարդ թշնամիք.
Ինձ զօրավիգն աղէ լերուք,
Ո՛վ սուրբ վրկայք յերկնից դուք.
Ես ձեր հաստչին եմ արարած,
Ընկալ զոգիս իմ Աստուած։
Զայս ասացեալ կացին շրթունք,
Եւ ձեռք լքան դողդոջունք.
Թրմբրուլթիւն սուրբ հեղաւ 'ի նա,
Ի պատուհանն յեցեալ կայ։
Վէհն եթերին 'ի գահոյից
Նըստաւ 'ի թեւս քրովբէից.
Երկինք անդէն խոնարհեցան,
Գունդ ծաւալին հրաբերան.
Փայլատակեալ և լոյս ահեղ
Սըփռէր յերկիր բազմազեղ.
Սաւառնաձայն բախմամբ թեւոց
Հուր ցոլանայր մէջ յամբոց,
ՅԱստուածորդւոյն յահեղ փառաց
Երկիր հիմանց երերաց,
Բանակք չարին 'ի խոր անդունդ
Հալածեցան գունդագունդ։

Հողագընդին յերերմանէ,
Զի մի երկիր պատառէ,
Ի վեր ոստեաւ խշման նոցին
Դալուկ դիմաք ահագին,
Ահեղ թընդման տեղեկանայր
Յարբանեկացն ըզպատճառ,
Զի՛ խուճապեալ այսրէն եկիք,
Տարտարոսին ժանտ որդիք։
Մեզ ջրմընաց խորշ խաւարին
Ի մեծ լուսոյն, ասէին,
Արքայորդին էջ 'ի յերկնից,
Վախճան եհաս ամենից։
Թողեալ զգահոյն արքունական,
Ընկէց յաջոյն զգաւազան,
Վազեաց անդէն զհողագընդիւ
Կաց 'ի զընին թաքըստիւ,
Երկրիս եդեալ 'ի շրջապատ
Ըզծնօտն ահեղ յուսահատ,
Ետես հասեալ քրովբէաձիգ
Երագաթև կառք հրաշիկ,
Աշտարակին կացեալ հանդէպ.
Զի՛նչ է տեսիլս այս անդէպ.
Աղջիկ 'ի քուն առ պատուհան,
Գունդք առ նովաւ հրաբերան։

Կնճիռք 'ի դէմս սեաւ իշխանին,
Աչք անհեթեթ կրկոցին.
Յափշտակեալ 'ի կառքն ունայն
Ի քրովբէից աղջիկն այն,
Հարին անդէն զայն աշտարակ,
Տապալեցաւ հարթյատակ,
Եւ 'ի տեղին շքեղ տաճար
Երկնահանդէս վեհափառ
Վերամբարձաւ վաղվաղակի,
Երկնաւորին արժանի.
Աբբունական պարզի դրօշակ,
Իւր տէրութեան նշանակ 4:
Շրջապատեալ յամպոց հրեղէն,
Շանթք 'ի դիմաց փայլակէն.
Սաւառնաթև վեց քերովբէք,
Փայլակնացայտք ահաբեկ,
Ճախրեն յայերս, թնդայ երկին
Եւ յարկք բացան տաճարին.
Ի գալ նոցին փառօք լցաւ,
Ինն 'ի դահոյս բազմեցաւ.
Գունդ սրովբէից կան 'ի սպասու,
Պահպանք էիցն ահարկու:
Անդ յանդիման սուրբ Աբբային
Ըզկոյան անմեղ կացուցին.

Կարկառ նըմին ցուպ արքունի,
Զի նա հարաւ զգողանի.
Մի երկընչիր, ասէ նըմա,
Ես եմ Աստուած քո անմահ.
Պատկեր մարմնոյս զոր տեսանէս,
Ի սէր մարդկան առի ես.
Ես անկարօտ 'ի ձէնջ փառաց
Խոնարհեցայ 'ի բարձանց.
Անպարտականս մահու խաչի
Յարարածոցս համբերի:
Զարչարանօք ըզքեզ կամիմ
Առնել կըցորդ մահուն իմ:
Զի քաջալանջ կացցես անահ,
Ըզգեցուցէք դըմա զրահ,
Եւ սաղաւարտ իմաստութեան
Ի գլուխըն դիք կուսական:
Ահա ետու զոգի իմ քեզ,
Պաշտպան վըշտացդ յասպարէզ.
Բերէք այսրէն Քրիստիանեայ
Շըքեղ պըսակ բիւրակնեայ 5:
Յայնըմ պահու շարժեալ կուսին
Փարիլ զոտամբն Յիսուսին,
Զարթնու 'ի քնոյն, բազկատարած
Գոչէ յերկինս առ Աստուած.

Զողորմութիւնս քո տէր օրհնեմ,
Այլ ես մոխիր և հող եմ։
Երանի՜ որոց դու տէր
Մատչես յերկնից քաջալեր.
Զի մինչ երկունք զիս փրկութեան
Ի գիշերիս յայս կալան,
Խանդաղատեալ զինև յերկնից,
Բարձրեալդ Աստուած, լուար ինձ.
Հաւատքյոյս սէր՝ի ծնունդս երկանց,
Լուծաւ կըռոց կոյր նախանձ,
Ընդ արարածս յելս արեւու
Զիս ըստացար օրհնելդու։
Տէր Աստուած իմ ըզքեզ ծանեայ,
Ընկալ և զիս ընդ սոսայ.
Քև արշալոյս յաղթանակեալ
Աղօտ լուսով կարմրափայլ
Փախըստական առնէ զգիշեր,
Զի դու այդպէս կարգեցեր։
Այս տարրը քև զալեաց խուժան
Քև թաւալէ ովկիան.
Մերթ լեռնանայ մերթ լուծանի
Հըպատակեալ քո ձայնի։
Ոչ ողողեն, սահման եդիր,
Քոյինակերտ զայս երկիր։

Գազանք ծանեան հաստիչ ըզքեզ,
Զի դու զնոսին կերակրես,
Սարտեաւ 'ի քէն անիծապարտ
Քոյինատիպ միայն մարդ։
Ամլ քեզ բաժին զիս ըստացար,
Քո եմ ձօնի, կենարար.
Քեզ բարձրելոյդ երկրպագէ
Եւ ոչ գիւաց Քրիստինէ։
Տըքնեցայ ես 'ի գիշերիս,
Որպէս ճնճղուկ 'ի տանիս.
Լըւիցեն ազգք և սարսեսցին,
Քո են երկիր և երկին։
Օրհնեա անձն իմ, օրհնեա ըզՏէր,
Տէր Աստուած իմ, մեծ եղեր.
Ոակի արծաթ փայտ և քար են
Աստուածք ազգաց, կորիցեն։
Յաւարտ բանիցս Իշխանին սեաւ
Խոժոռադէմ սըլացաւ,
Եւ 'ի Թընդիւն դուիման ոտին
Սանդարամետք սարսեցին։
Էջ նա յանդունդս ահեղ գոչմամբ,
Փայլակնացայտ գոռ ակամբ,
Սրտմըտութիւն խբրև ըզբոց
Սրտին ժայթքէր 'ի խորոց։

Շուրջ մրրրկեալ շանթիք թափին
Ի բերանոյն ահագին .
„ Ի՜հ ամօթոյս , մանուկ մատաղ
Ըզաէրութեամբս առնէ խաղ .
Նախանձեցաւ ընդ իմ նրուէր ,
Վառեաց զաղջիկն ինձ 'ի վսեր . . .
Տրկար է նա , մարդ անձնիշխան .
Եւ 'ի բազումս քաջացան
Իմ արբանեակք ահեղակազմ
Ընդ այսպիսեաց գալ 'ի ռազմ .
Գունդ կազմեցէք և վեհընտիր
Ահեղասպայ զինակիր ,
Մերձեցարուք առ ընտանիս ,
Որք տակաւին պաշտեն զիս .
Ի սէր նոցուն թողցէ զԱստուած
Եւ զոհեսցէ իմ փառաց .
Ապ' եթէ ոչ , սանդարամետ
Վրիժուց նորին տեսցէ զմէտ " :
Օգ շառաչեաց բախմամբ թևոց ,
Զօր սևագունդ զերթ յամբոց
Փայլակնօրէն ծաւալեցաւ
Ընդ արշալոյսն ընդ երկնաւ :
Մինչ մերձեցաւ առաւօտեան
Ժամ աստուածոց պաշտաման ,

Զայնեալ ասէն նորուն ընկերք.
“Եկ մի գոցուք աննըւերք
Այն աստուածոց կենդանատու
Որոց եղեր անարգու,
Զի մի չարիս խորհին ըզքէն,
Ահա գըժնեայ ակնարկեն”:
“Անիծեալք են աստուածք և դուք,
Զի չեն սոքա կենատուք:
Կարծէք փոխել զոհիւս ըզդէմ,
Էին և են միշտ գըժխեմ.
Այսպէս գըժնեայ կոփիչք նոցին
Դըժոխագէմ կըռեցին.
Դեք են սոքա, և որ պաշտեն
Պիղծ արբանեակք դիւաց են”:
Զայս ասացեալ հար աքացի,
Եւ զարկուցան ըզգեստնի.
“Թէ աստուածք են, ո՞ւր իցէ վրէժ,
Զիս արասցեն գահավէժ.
Ա՛յլ է Աստուած արարիչ իմ,
Ըզնա ևեթ դաւանիմ.
Այսօր ծանեայ և սիրեցից,
Զի նա է տէր համայնից:
Իմ մանկութեան տիոցս աւա՜ղ
Եւ կուսութեանս այս ջըքնաղ.

Ուրուականացս այս դիւածին
ԶիաՀրդ ջոքայ զՀետ նոցին »։
Եվ զայրագին 'ի միւս սենեակ,
Եւ զերթ անբիծ աղաւնեակ
Մընչէր 'ի սիրտ խանդաղակաթ
Քրիստոսի Հարսն անարատ։
Կանգնեալ ըզկուռս դիւապաշակից
Խունկս արկանեն զբմռալից.
Այլ Քրիստինէ բազկատարած
Ջերմ պաղատէր առ Աստուած,
Զի խորխորատ սատանային
Ի վերայ իւր կափուսցին,
« Ես գոհացայց, ասէր, ըզքէն,
Լեր ինձ, Աստուած, ապաւէն »։
Ի պաշտաման մինչ դեռ կային
Եւ Քրիստինէ առանձին,
Հա Ուրբանոս և հայր նորուն
Ի տես եկեալ սիրելւոյն,
Պաշտօնակցայ նախ Հարցանէ,
Տեղեկանալ զողջունէ։
Այլ զի նոցա Հարեալ Ճակատ
Հօրն ազդէին խորհուրդ վատ,
Ջանարգանաց զաստուածոց քէն
Մի յապաղել դըստերէն։

Ոչ խորհրդոց անսաց նոցա
Եւ ոչ խակոյն բարկանայ.
Մրտեալ 'ի նեռս, ասէ, «Դուստր իմ,
Սոքա ըզքէն զինչ խօսին»:
«Մի՛ ասեր ցիս, չեմ դուստրը քոյ
'Նրւիրեցայ Աստուծոյ»:
Խանդաղատեալ պատասխանեցոյն,
Եւ շրջացեալ 'ի դեղոյն,
Արկեալ անձկով գիրկս 'ի համբոյր,
Զնոցայն գրրեաց սուտ հրապոյր:
Լրցեալ սիրո

Խնդրել վերէժ յանաստուածից,
Ըզդիս ջնջել պրղծալից »։
Ի դուրս վազեալ սակր 'ի ձեռին,
Բոցք 'ի դիմաց հատանին.
Անդէն զարձանան հարեալ փշրէ,
« Ո՞ւր են աստուածք, Սելինէ »։
Ի կուսանաց մին էր և սա
Հաւատարիմ Քրիստոնեայ.
Սովաւ ձօնի ոսկին 'ւ արծաթ
Կարօտելոց բաշխ առատ։
Այլ մոլեգնեալ ընկերք նորին
Ազգեցութեամբ բանսարկուին,
Որ մերընչէր առիւծուց պէս
Ելեալ ընդ սա 'ի կրկէս,
Ուրբանոսի ձեպեալք 'ի տուն
Դից կորըստեան գոյժ էտուն։
Գազանացեալ այրն ամէնի,
Ժանտ դատաւոր Տիւրոսի,
Զօրէն ձիոց դափր հատանէ
Ի դուրս վազեալ 'ի տանէ,
Եւ գունդ զօրաց ահեղասպայ
Ի տուն կրոցն առեալ գայ.
Եւ ըստուգեալ զահեղ ոճիր,
Գոչէ, « Ո՛ դուստր անյարիր.

Ի վեր վազեալ և հարցանէ,
Ո՞ւր են աստուածք, Քրիստինէ՝՝ :
Վառեալ բոցով աստուածային
Պատասխանէ զայրագին.
՝՝ Ո՞չ գիտիցես, զի ոչ յերկրի,
Աստուած յերկինս բընակի.
Զերկինս աթոռ իւր պատրաստեաց,
Եւ պատուանդան զարարածս :
Զոր կորուսի՝ թէ աստուածք են
Ըզվրէժ ինքեանք թող խնդրեն.
Ընդէր, հայր իմ, դու զայրանաս,
Աստուածք ածեն պատուհաս :
Թէ դու զպարգևս երկնաւորին
Իմանայիր քումյանձին,
Ըզքաղցրութիւն զերկնից աստուսա
Ճաշակէիր զանկորուստ,
Եւ ոչ կորուստ անշունչ կրռոց
Վառէր 'ի քեզ զայդ մեծ բոց՝՝ :
Բանքն 'ի բերան մինչ դեռ էին,
Ցասմամբ իշխանն ահագին
՝՝ Ա՛յդչափ, դոչէ, յանդգնեցար,
Մինչև աստուածք բարերար
Ի քէն, աղջիկդ ապերասան,
Դիւք 'ւ անբզդայք կոչեցան :

Հապա զի կայք, զաղջիկդ հարէք,
Թշնամանացն հատուցէք »։
Յարձակեցան հրզօր մարտիկք,
Նա զերթ պարիսպ անառիկ
Ըզդէմ կալեալ ըզհարուածոց
Կարդայր անէծս ատուածոց։
Ուրբանոսի տեսեալ զի կայր
Անազդելի իբրև ժայռ,
« Մերկացուցէք ըզդա ասէ,
Զի ձեր հարուած ազդեսցէ »։
Անդէն քարշեալ զըզգեստ նորին
Կատաղաբար ձաղկէին։
Կոյն ամօթիած շառագնէր յոյժ,
Ընդ մերկութիւն չունէր ժոյժ.
Զի մի տեսցեն աչք անարժան,
Ներկէր իսկոյն վտակ արեան.
Իսկ նա յեթերս բազկատարած
Կարդայր հոգւով առ Ատուած.
« Դու որ նախս 'ի քերովբէս
Եւ խոնարհաց լսողդ ես,
Ի վերայ իմ հրզօրք յարեան,
Լեր ինձ Ատուած օգնական։
Թէ թշնամւոյ նախատեալ էր,
Անձն իմ արդեօք համբերէր.

Այլ սա հայը իմ՝ ինձ մարմնակից,
Սրտա զիաբդ համբերից։
Յամօթ դիմացդ այս պատուհաս
Եւ դու ոչպէս չիմանաս.
Ըսպասաւորք թող վըկայեն,
Անպատուեցար դու քեզէն"։
Մինչ կոյն յարեան թաթաւեալէր,
Եւ կարմրափայլ շողշողէր,
Վէտն Ուրբանոս ընդ խաղ ասէ,
"Այդ ծիրանի վայելէ
Ստամբակ դրստեր ամբարտաւան,
Դից բարերար անհաւան։
Դարձիր 'ի միտս արդ Քրիստոնէ,
Եւ բարերար դից զոհէ"։
"Քրիստոնէ հարան է երկնից,
Ոչ ճանաչէ զանուն դից.
Այսպէս երբեմն և Քրիստոս
Ներկեալ յարիւն յորդահոս,
Յամբարհաւաճ դատաւորաց
Մահու խաչի համբերեաց.
Որդի գոլով նա Աստուծոյ
Եւ վասն մեր զանձն 'ի զոհ.
Եւ դուստր անարդ Ուրբանոսի
Այսքա՞ն ես չե՞մ արժանի։

Դու ցարդ կըռոց պաշտօնատար,
Զինչ յաստուածոցդ օգտեցար.
Դու դերազանց քան ըզնոսա,
Թէ քեզ էի պաշտօնեայ,
Գէթ զիմ զհայցուածս կատարէիր,
Վըշտացըս լեալ կարեկիր։
Սոքա ոսկի և արծաթ են,
Անձանց օգնել ոչ կարեն.
Եւ ցասումն իմ բանիս վրկայ
Ճըշմարտապէս ցարդ իսկ կայ.
Ո՞ւր են Աստուածք զոր փչրեցի
Հանդէպ արփւոյն այս երկնի.
Թէ Ճըշմարտիւ աստուածք էին,
Վըրէժ յինէն առնուին »։
Լուեալ նա զայս 'ի դըստերէն,
Լեղի ժայթքէր 'ի սըրտէն.
« Շըղթայ անուր 'ի պարանոց,
Եւ զոտս արկէք 'ի գեղոց.
Ի խաւարչտին տարէք 'ի բանդ
Եւ անսըւաղ մեռցի անդ »։
Ասէ ժըպտեալ Քրիստիանէ,
« Գոհանամ զքէն Ուրբանէ,
Զի մինչ ըզդիս քո պաշտէի,
Իբր աղախին քո էի.

Այլ արդ կրրեմ քառամանեակ
Խմոց արդեանցս յաղթանակ։
Այսքան պաշտօն դիցդ էր վայել,
Տապարահար ջախջախել.
Նոցին 'ի ճահ այս գործ ջրքնաղ
Կալովս ասէն անրզբաղ։
Զեն խուլ երկինք էին աթոռ,
Ուր նահատակք պարաւոր,
Իմ Աստուծոյս ըսպասարկուք
Դիւացդ երբեմն անարգուք "։
Ջերմ համբուրէր ասելով զայս
Զերկնապարգև ըզչըղթայս.
Եւ զարմացեալ զինաւորաց
Անկանէին 'ի կասկած,
Գուցէ խաբք են մերըս պաշտօն,
Զի սա թըւի կոյս ըզգօն,
Արիասիրտ դից անարգու
Եւ ցասման հօրն ոտնհարու։
Իսկ նա երթայր և գոհանայր
Եւ կողկողէր, "Ո՜ ինձ տայր,
Զի այս շըղթայք յիս մընային,
Եւ զիս սոքիմքք թաղէին "։
Եւ մինչ մուծին 'ի բանտ մըթին,
Անկեալ կուսին 'ի գետին,

Զի հետք արեան անդ 'ի մրուայլ
Սրբոց շողէր լուսափայլ.
Ըզհողն զայն արենացայտ
Ողջագուրէր խանդակաթ,
Եւ պաղատէր կողկողելով,
Զի շարժեսցին 'ի գորով.
« Լերուք, ասէր, սուրբ նահատակք,
Մաղթեմ, և ինձ օժընդակ.
Զեօք ես եկի յօթևանս յայս,
Մի՛ զիս թողուք 'ի շըղթայս »:
Իսկ անօրէնն այն Ուրբանոս
Հեղձամղձուկ և անխօս,
Ամօթապարտ դառնայր 'ի տուն
Եւ խածատէր ըզլեզուն.
Եւ արտասուաց յարիւն փոխան
Աչք բարկացայտ գունեցան,
Եւ կաղկանձէր իբր այսահար,
Մահ և կորուստ ըսպառնայր.
« Ես ես եղէց նըմա դահիճ »:
Այլ նա անկեալ 'ի մահիճ,
Յոգւոց ելեալ և գալարէր
Իբրև վիշապ կիսամեռ:
Այսրմ տեսլեան կայր 'ի զընին
Եւ Յանիկէ կին նորին,

Եւ զարհուրեալ դիտէր մեղմով,
Շարժէր ընդ կիրսին գորով։
Ցըսպասաւորս մատեաւ Եհարց,
« Ո՞ է վըճռոյն դիմադարձ ».
Նոցա պատմեալ անկեղծաբար
Առն ըզցաւոց ըզպատճառ,
Եւ թէ որպէս ըզդիս կորոյս
Քրիստիանէ մեծայոյս,
Զիարդ 'ի բանդ յարիւնթաթաւ
Եւ վերալից նա եդաւ։
'Դ իմաստութիւն բանից նորա,
Ասէ կիղէս, զարմացայ։
Իբրև լըսաւ զայս Յանիկէ
Ըզմիածին դըստերէ,
Ճեղքեաց խսկոյն ըզպատմուճանն,
Ի գոյն հարաւ 'ի դալկան,
Եւ կատաղեալ քարշէր զանս,
Եւ կողկողէր, « Հարէք զնս »։
Մերթ ճեմն առնոյր անդ 'ի դաւթի
Իբրև ըզվագր ամեհի,
Մերթ վազս առեալ դիսախըռիւ
Անձամբ անձին գայր 'ի կռիւ։
Որպէս յորժամ առիւծ մատակ
Կորուսանէ զիւրն ըզձագ,

Մըռընչելով կատաղաբար
Վէր վայր վազէ անդադար,
Եւ ոչ գըտեալ միշտ կաղկանձէ,
Հանգոյն առնէ Յանիկէ։
Ապա խրրև ըզգաց անձին,
Մըտեալ ուրեք առանձին,
Քուրձ ըզգեցաւ մոխիր զգըլխով,
Ածէլ ըզդուստրն 'ի գորով.
Հասեալ բանտին 'ի դուրս գոչէ,
„Դու անստ լցես, Քրիստոնէ.
Եկ լուր, որդեակ, ձայնի խմուտ,
Եկ մի լինիր ապառուտ.
Յիշեա զերկունս զոր կրրեցի,
Անձն իմ առ քեզ կողկողի։
Գիտես քանի պաղատանօք
'Ի աղերսալից արտասուօք
Պարգև 'ի դից առի ըզքեզ,
Հիքացելոյս ոչ խնայես։
Են երջանիկ քան զիս գաղանք.
Եւ որ լցեն իմ յանցանք.
Մնուցի ըզքեզ դիրգ և փափուկ,
Եւ 'ի մահուն չարաշուք
Ճրգամբ մեծաւ կորզեալ ժանեաց,
'Ի 'ի բազմադէմ վըտանգաց

Ըզմանկութիւնդ ճողոպրեցի,
Յայս տիս չըքնաղ հասուցի.
Աշխատութեանցս այս տըրիտուր,
Զաւուրս կենաց զայս տըխուր
Իջուցանել 'ի գերեզման,
Ո՜հ դու, դուստր իմ, անհաւան:
Ո՞ քեզ ուսոյց անկուշել դից,
Եւ ըզքո կեանս վերալից
Անցուցանել 'ի խաւարչտին
Յայս յանձուկ բանտ և մըթին:
Ահա հայր քո 'ի ցաստանէ
Գուցէ ըզքեզ վախճանէ.
Ո՞ ինձ լեցի յայնժամ զաւակ,
Սիրոյս արժան անապակ:
Լո՛ւր, Քրիստինէ, տես յի՞նչ պայման
Զտիկինս ածեր պալատան.
Քեզ արքունիք մընան չըքեղ,
Եւ ճոխութիւնք բազմազեղ:
Եկ, Քրիստինէ, եկ երթիցուք,
Յայս մի՛ օթեր բանդ անձուկ,
Եկ 'ի գիրկս իմ, դուստր իմ չըքնաղ,
Թող զայդ աղանդ դիւաբախ.
Քեզ թագաւորմ ժիր պարմանիք
Ի քո մընան հարսանիք,

Ի քո տեսոյդ մի՛ զիս զրկեր,
Եւ քո մեռայց առ ընթեր »։
« Մի՛ զիս կոչեր, մի՛ զիս, ասէ,
Ոչ քո դուստր է Քրիստինէ.
Զայս սուրբ անուն զորոյ կրեմ,
Խաչեցելոյն ձօնի եմ.
Երկնեցեր զիս, շընորհ ունիմ,
Այլ ոչ ծընող դաւանիմ.
Աւաղ էր ինձ, թէ ես կայի
Ի քո՝ կրրօնս սատանի։
Եմ ես պարգև, ոչ քոց դիւաց,
Այլ որ զաշխարհս զայս հատեաց.
Նորին եմ ես, երկիր՝ւ երկին
Ըզնա Աստուած դաւանին։
Նա զօրացոյց զայս զիմ բազուկ,
Ըզձեր պաշտօնդ չարաշուք
Ջնջել յերկրէ, և ըզդիս ձեր
Ի սայր արկեալ՝ի սակեր։
Գազանք վայրի են երջանիկ,
Զի դուք ըզքար դաւանիք,
Նոքա անբանք զԻն ճրշմարիտ.
Ըզձեր հընարդ ո՞ եդիտ.
Մըտաւորաց չիցէ՞ ամօթ,
Ոչք ձեր ձեռաց են կարօտ,

Եւ որք 'ի ձէնջ ըստեղծանին
Իբրու Աստուած պաշտեացին։
Զոսկեձեղուն քան ըզպալատ
Է ցանկալի ինձ այս բանտ.
Անտի 'ի ծոց գահավիժին
Սանդարամետս 'ի վերին,
Ասի յԵթերս սուրբ նահատակք
Ինձ կազմեցին վերելեակ։
Եմ խանդակաթ իմ փեսային,
Ոյր առագաստ է երկին.
Ըսպիք վերաց զոր ընկալայ,
Ինձ ծիրանիք բիւրակնեայ։
Ոչ ելանել ես 'ի բանտէս,
Այլ 'ի մարմնոյս ցանկամ ես.
Հեղից զարիւնս զայս համօրէն,
Ապա երկինք զիս առցեն։
Եւ թէ ցանկաս դու գալ ընդ իս,
Դիւապաշտից թող ըզդիս։
Յաշխարհի աստ մեծ են վրտանգ,
Եւ սակաւ ինչ մեր այս կեանք.
Ի վախճանել նոր կեանք կըշռին,
Փառք և տանջանք ոչ փոխին »։

Տեսեալ Նիկեայ ըզմիտան անգարձ,
Եւ զի բանիցն ոչ անսաց,

Զի մի գուցէ և զինքն որսայ
Իմաստութիւն Քրիստինեայ,
Սրտիւ թախիծ չոքաւ 'ի տուն։
Բայց Քրիստինէ կայր կանգուն.
Անդէն Կիղէս գոյժ 'ի բերան 6
ԸՂՍԷԼԻՆԵԱՅ ըզմահուան
Ահապարեալ առ նա եհաս
Ըզմեծ պատմել պատուհաս։
« Մինչ Սէլինէ ընդ քո վիճակ
Տխրեալ նստէր 'ի սենեակ,
Լալով գոչէր « Կոյսն է անպարտ
Հօրըն ցասման տարապարտ ».
Բանից սորա ջըհանդուրժեալ
Ընկերքք նըմին ոխակալ,
Մատնեն ըզնա Ուրբանոսի,
Ասելով թէ « Հաւատի,
Իշխանդ, գիտեմք ըզՍէլինէ
Առ գործակից Քրիստինէ
Փըշրել ըզկուռս, և աղքատաց
Զոսկին զարծաթ սա բաշխեաց »։
Հըրէշ վայրագ չէտես Տիւրոս
Որպէս յայնժամ զՈւրբանոս.
ԸՂՍԷԼԻՆԷ ետ նա դահճաց
Մատնել ահեղ տանջանաց,

«Եւ մի, ասէ, բընաւ թաղէք.
Ըզդի նորին ընկեցէք
Յանապատի գազանաց դէշ,
Վաղիւ լուցցէ դիցն ըզվրէժ
Եւ Քրիստինէ ապերասան
Յասմանս ուսեալ ըզպայման»։
Եա, Քրիստինէ, մինչ տանէին
Ըզ Սելինէ առ ահին
Ի գոյն գալկան հարեալ տեսի,
Որ պաղատէր ողբալի
Ածել ըզնա նախ քան 'ի սպանդ
Առ սիրելին իւր 'ի բանդ.
Այլ պաշտօնեայք դըժոխագէմ
Ընկըրկեցին յեռաս ընդդէմ,
Եւ 'ի տանջանան ըզքեզ կոչէր,
Մըխիթար ոք նըմին չէր։
Անդամ անդամ յօշատեցին
Ըզ Սելինեայ ըզմարմին
Իբրև գազանք արեանարբու,
Մարդկան ազգի ահարկու։
Ըզմահ լուեալ ըզ Սելինեայ,
Ի դրան բանդին թալկանայ.
Ջուր զովարար անդէն կիղէս
Ի Քրիստինեայ արկ յերեսս.

Յանձին եկեալ Քրիստիանէ,
Եւ զի անդէն շատ յամէ,
Ճեպեաց ըզնա երթալ անտի,
Զի մի իւր հայրն իմասցի.
Ինքըն նստեալ անդ միայնակ
Հեղոյր արտօսր անուշակ.
„Քեզ Սելինէ աւաղ, ասէր,
Զի քոց ըղձից ոչ հասեր ?:
Ահ, արիւնռուշա դահիճք գըժնեայ,
Դուք կորըստեան Սելինեայ
Դուք էք պատճառ. 'ի ձեր ձեռաց
Նա ճողոպրել ոչ կարաց:
Քեզ վա՛յ եղո՛ւկ իմ Սելինէ,
Ի զուր ողբայ Քրիստինէ.
Ոչ կրկնեսցեն լերինք անձաւք,
Զիս ընկճեցին սիրոյդ ցաւք:
Ո՞րպէս անսայր իմոց բանից,
Մինչ պատմէի ես զերկնից
Եւ զԱստուծոյն իմ ճըշմարտէ,
Յոգւոց հանէր 'ի սրտէ:
Սա դիւրընտել սիրտ ըզգայուն
Յանձին կըրէր սիրասուն.
Սա 'ի վիշտս իմ, սա միայն էր
Իմոյ անձին քաջալերէր:

Յորչափ երկրի հնչեն ափունք
Յովկիանու մրկանունք,
Լերինք յաւէժք և ձիւնապատ
Յորչափ ծլփեն զանապատ,
Լացցեն ըզքեզ, իմ Սելինէ,
Կաթիլք ամբոց 'ի յերկնէ։
Հասարակաց երկիր շիրիմ
Փակեաց ըզգուլթն ոսկերիմ։
Դեղ գալարի մի՛ ընձիւղին
Արիւնացայտ 'ի տեղին,
Ուր յագեցան գազանք վայրի
Արեամբ մարդկան ծարաւի։
Գոգ լայնեցաւ քոց թշնամեաց,
Ի՞ՆԵՐ յաշխարհ ստուերամած,
Ուստի չիք դարձ 'ի հայրենիս,
Եւ այլ ոչ ևս տեսցես զիս։
Ոչ բաւեսցեն խոխոջք գետոց
Ըզքոյդ մեղմել սրտիդ բոց.
Ովկիանու ոչ յաղթ կոհակք
Տարտարոսին ըզկըրակ։
Որ ըզմայրիս դուք տապալէք,
Ահեղ հողմունք, ո՞ւր իցէք,
Լերուք նրմին դուք զովարար,
Աղեկիզեն նետք հրավառ։

Ո՛հ, ողբացէք տարէրք ընդ իմ,
Եա 'ի նանիր նրկրրտիմ,
Զի արդ կորեաւ իմ սիրելին
Յանդարձ կորուստ ցաւագին.
ՄուԹ արհաւիրք զեղան զնովաւ,
Յաւէրժ յամայր նա կորեաւ.
Զայն լալոնից հարցեն մայրիք
Եւ բարձրաբերձ յաղԹ կաղնիք.
ԹԷ հողմք չնչեն 'ի մեայլ յամպոց
Իմ Սելինեայ լեցին կոծ։
Այլ ես ըզքեզ օրհնեցից, Տէր,
Զանձն իմ ցաւած կորզեցեր
Յաւիտենից 'ի մահուանէ,
Անձն իմ առ քեզ ցնծասցէ »։
Մինչ Թալկացեալ նա նրւաղէր,
Բանդին որմունք նրշողէր,
Ելեալ հրեշտակ զի ըսփոփէ
Ըզսիրելին Քրիստինէ,
Տնօրինականսն տայր 'ի նկար
ԳեղեցկաԹոյր և ճարտար,
Զանուանս գրրեալ ընդ նրկարիւ
Ատ անդ դրնէր նա ցրրիւ։
Անդ տեսանէ մանուկ մատաղ,
Արփիատիպ և չրքնաղ,

Պատեալ յաղքատ 'ի խանձարուր
Եւ յանբանից 'ի մըսուր,
Մերկ 'ի զգեստուց մըրսեալ դողայր
Յանպատրաստար 'ի քարայր.
Խանդաղատէր և մայր նորուն
Կոյս օրիորդ երկնատուն։
Երկրպագու նըմին հովիւք
Գետնամածեալ կան անթիւք,
Անդ սիւն հրեղէն կախեալ յերկնից
Եթեր վերուստ աստղալից
Լուսաւորէր զաղքատին յարկ
Եւ զօթևանն այն անարդ։
Մեծ աւետիք հասարակաց
Գունդ լուսերամ հրեշտակաց
Զեկեալ հասեալ զերկնից ալքայն
Աւետէին քաղցրաձայն.
Եւ թագաւորք երկրրպագու
Տիեզերաց ահարկու
Անդ 'ի գետին մանկան աղքատ
Զարքեան հակեն ըզձակատ,
Պարգևս հանեալ առատատուր
Ոսկի արծաթ և զըմուռ։
Զուարթունն այսպէս կարգ ըստ կարգի
Ըզվարս Փրկչին հրաշալի

Ճարտարարուեստ նրկարագրէր
Ի գիր մատանցն անբստուէր։
Ընդ կիրս փրկչին չարչարանաց
Զուարթնոյն աշխոյժ փափկազգած,
Կենդանատիպ գիրգ տեսարան
Կուսին առնէր յանդիման.
Ոյր արտասուք մարգարտահատ,
Սրտին զեղուած խանդակաթ,
Կիտուած սրփռէր 'ի դէմս աղջկան
Զերթ ցօղն 'ի վարդ կարմրերփեան։
Ընդ տեսանէ ըզՏէր փառաց
Անկեալ 'ի ձեռըս դահճաց
Եւ մերկացեալ 'ի հանդերձից,
Պըսակ 'ի գլուխ փըշալից,
Յարիւն ներկեալ բոսորաբուղխ
Զատուածայինն ըզգըլուխ.
Ընդ ըզփրկիչ կապեալ 'ի վէմ
Գունդ զինուորաց դժոխադէմ,
Ընդէն խուժեալ վերայ նորին
Եւ անողորմ ձաղկէին։
Պատառք մարմնոյն տէրունական
Օդապարէր ցիր և ցան,
Արիւնն հոսեալ վըտակօրէն
Թանայր զյատակն համօրէն։

Այլ տեսարան կուսին բացաւ
Գորովաղէտ զառաջեաւ.
Պարան 'ի յուլքն Յիսուսի,
Եւ փայտ ըստուար 'ի յուսի,
Ի սայր տանէր մեծ Գողգոթայ,
Ի բլուր սիրոյն գերակայ։
Այլ կրթոտին ծունկք տերունեան
Դրժուարընթաց 'ի յուղւոյն.
Ձաղկեալ քարշեն դրժնեայ դահիճք,
Եւ սայրասուր անդէն խիճք
Պատառոտեալ ծընգացն ըզմորթ
Ներկէր ըզհողն յարիւն յորդ։
Այլ տեսարան. բազկատարած
Պըրկեալ 'ի փայտ զէնն Աստուած,
Եւ բևեռաք հաստահեղոյս
Բարձրացուցին 'ի գահոյս։
Իսրայէլեան այգւոյն մըշակք
Զայս կանգնեցին յաղթանակ։
Այլ ՀԱՆԳՈՒՐԺԵԱԼ արեգական
Ընդ գործն ընդ այն անարժան
Զակն իւր կափոյց զի մի տեսցէ,
Եւ լուսաւորքն 'ի բարձուէ
Երկիւղալից և դալկահար
Հողան նըստեմ 'ի կամար։

Անդ Մարիամ կայր մեկուսի
Ընդ սիրելւոյն Յիսուսի.
Անդէն ձեղքեալ զդաս զինուորաց
Առ Միածնին մօտ եկաց։
Անդ էր դիտել ցաւոց թարգման
Դիմաց ըզդոյնն ըզդալկան։
Գոչումն ահեղ 'ի քառաթև
ՅԱստուածորդւոյն լուր եղև,
Սիւնք շարժեցան հողագընդին,
Շիրիմք 'ի դուրս ժայթքեցին.
Միոյն մահուամբ մեծ աւարաւ
Մահուն պահակ յագեցաւ,
Այլ ըզվրիժուն զինաւորաց
Ըզքէն թափել ոչ կարաց։
Մի ոմն անդէն ըզտէգն էհար
Յանշունչ մարմին դալկահար.
Բոսորաբուղխ արեան վրտակ
Յայտէր կողէն հրակայլակ։
Քրիստիանէ աստէն անկաւ,
Խրթեաց Զուարթունն և սլացաւ։
Յոտին եկաց, «Այս բանդ նրսեմ.
Ո՞ւր այն խորան լուսաձեմ.
Ընքանչելիս անձառ տեսի,
Աստուած մեռեալ 'ի խաչի։

Եւ զինչ 'ի մէնջ նա կարօտէր,
Որ ընդ աչմէ հօր նստէր,
Որոյ լի են երկինք երկիր
Աչոյն բաշխմամբ շնորհաձիր։
Ընդ իմ մեռաւ տարապարտուց,
Ես պարտաւոր բիւր մահուց,
Ահեղ տանջանք, ո՞ւր են դահիճք,
Հուր սուր խայթոց և քերիչք։
Մեռայց ես, Տէր, մարտիս զհանդէս
Ընդ սիրելեացդ ընկալցես.
Հրաւառ ուղխից թէ գեռք յորդեն,
Առ հուր սիրոյդ ոչինչ են։
Վէմք ապառաժք քև բորբոքին,
Եւ յիմ հարաւ բոց սրտին.
Տէր, յարգանդէ զիս դու ծանեար,
Ըզքեզ օրհնեմ անդադար.
Ո՛ զիս առնէր քեզ խաչակից։
Զո՞ր ես տրիտուր հատուցից
Սիրոյդ փոխան, ո՛վ Աստուած իմ,
Ես թող այժմէն ճենճերիմ՝՝։

Աստուածային տարփմամբ սիրոյ
Եւ բռնութեամբ գիշերոյ
Անկաւ 'ի վայր, և նինջ քաղցրիկ
Կոփոյց զաչկունսն աւանիկ։

Իմ լըռեսցէ արդ բամբ լարից
Կարկաջ անշուք Կամենից 8,
Վաստակաբեկ Թող Քրիստինէ
Անոյշ 'ի քուն նիրհեսցէ։

# ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳՈՑ

ՊԱՐՔ հրեշտակաց, յորմէ զարհուրեալ սադայէլ գումարէ զիւրան. Բաալ սպարապետ գիւադունդ զօրաց յանձն առնու իւրովքն Էլանէլ յասպարէզ ընդ կուսին. զարթնու Քրիստինէ և կայ յաղօթս: Գայ Կիղէս աւետել կուսին զփոխել հօրն 'ի խորհրդոցն. գալուստ մօրն, բանք նորա պատիրք, պատասխանի Քրիստինեայ: Առեալ տանին զնա դահիճք յանդիման Ուրբանոսի. բանք հօրն և դարձուածք կուսին. դնեն զնա 'ի նաւ յուղարկել: Բաալ հրաման տայ իւրայոցն. ալէկոծութիւն, և աղօթիւք Քրիստինեայ հանդարտումն. պատերազմ գիւաց ընդ միմեանս մի ոմն 'ի նոցանէ փախուցեալ 'ի խորշս տարտարոսի ողբայ զիւրնախկին վիճակն և կորուստ: Ժամանել

նաւին 'ի կղզին, գիշերել նորա անդ, և 'ի շրջելն ընդ ափն ծովուն հանդիպեալ ալէկոծեալ նաւու ելանէ 'ի նա. յանկարծ մտեալ 'ի տուն պատմէ զպայման գալստեան իւրոյ անդր. զայրոյթ հօրն. տանջանք և առաքումն 'ի բանդ. աղօթք կուսին և երևումն հրեշտակի, և ողջացուցանել զվերան և կերակրել, և գոհութիւն նորա առ Աստուած։ Առեալ տանին զնա, զի արկցեն 'ի ծով. բանալ երկնից. աղօթք կուսին 'ի վերայ մկանանց ծովուն, և մկրտութեան փափաքանաց կատարումն 'ի տեառնէ։ Լսէ հայրն, ածէ 'ի տուն, հրապարակախօսութիւն նորին, առաքի դարձեալ 'ի բանդ, զի գիշեր էր։ Ուրբանոս գիշերատանջ լեալ 'ի հրեշտակաց, փչէ զդառնացեալ ոգին։ Ողբք։

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

## ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Մ՚ՈՒՍԱՑԴ անմահ, որ 'ի պարու
Սուրբ ակամբիցն դասու,
Վեհ դասապետ մեծահռչակ
Միրեցելոյն զյաղթանակ
Յանլուր քընար հնչեցուցեր
Յեղեալ 'ի լոյս ըզգիշեր,
Եկ առ ընթեր նիստ իմ քնարիս,
Քև հնչեսցէ տաանաղիս։
Հասարակաց ոչ ննջէր քուն
Իմ Քրիստինէ զբարթուն,

Երաժշտաց սուրբ գումարտակ
Ակումբ առեալ քաղցրանուագ,
Բանդն այն նրսեմ կազմեալ ելթեր,
Բախք նրւագաց զայս հնչէր.
« Անընկճելի և գեր տարերց
Տրկար մարմին դիւրահերձ,
Վեհին 'ի քեզ, 'ի քեզ վեհին
Մեծ զօրութիւնք նշմարին։
Երկնապարգև հանճար մարդկան
Բնաւից 'ի գիւտ բաւական,
Անյաղթ տարերց արկանէ սանձ,
Նոցին գրտեալ վեհապանծ։
Ընդվայր ոխայ փիղ վիթխարի,
Ընդվայր առիւծ ամեհի
Բաշ վերառեալ ահագնեացէ,
Մարդ քան ըզնա հրզօր է.
Այլ քան ըզմարդ կամք աննրկուն
Յաղթէ մարդկան հանճարոյն,
Կրշիւռ հանդէպ մենքենայից
Դրնէ զմարմին վիրալից։
Թէ քայքայի հիւսուած նորին,
Պահեալ ըզկամն իւր հաստին,
Անգրծելի ըշտեմարան,
Աւանդապահ զօրութեան,

Առեալ տանի 'ի թևս հոգւոյն,
Հանգչի 'ի ծոց Բարձրելոյն։
Ո՜հ բաշեց Տէր, հետոցդ կընիք
Ի գահոյից սփռեալ ձիգ,
Ի յանդընդոց առեալ ըզձեռս
Շարես յաստեղս 'ի յերթերս,
Անտի 'ի վիհ խորասուզես,
Ցուցեալ բազկացդ ըզհանդէս։
Վտարանչելոցն 'ի քէն դու Տէր
Ըզդասս յերկնից մերժեցեր.
Թօթափեցան վէս գումարտակ
Զանդունդս առեալ նրպատակ,
Զի մի նրւազ չափ սահմանի
Ըսպասարկուացդ եղանի,
Նոր արարած արտակիտեալ
Քո անդընդոցդ 'ի մրռայլ,
Նախանձելի եդիր ըզնա
Հանուրց գոյից գերակայ։
Քոյինատիպ դրոշմեալ ըզկաւ,
Ի քո պատիւ հոլն առաւ.
Ներել մեղաց դիւրին էր քեզ,
Այլ զօրութեանդ ըզհանդէս
Ուսցուք 'ի քէն, մի՛ յողն կալ
Քոյոց բազկաց դէմ կացեալ։

Լի ես փառաք, և ոչ փառաց
Այլ ընդունիս յաւելուած.
Եւ աննախանձ է քո պարգև
Ամենասփիւռ քան զարև,
Դու քաջալեր հանդիսատես
Ըզքոյսդ ածեալ յասպարէս,
Թագ բոլորես 'ի գլուխ նոցուն,
Փոխան Ճրագանցն անկայուն,
Ի զօրութիւն քոյոյ բազկին
Շահատակեալ 'ի նոսին:
Արդ Քրիստինէ, ժամ է զարթիր,
Աչ Անմահին մարտադիր
Կըշռէ 'ի գլուխդ յաւէրժ պըսակ
Դոյզն այս վըշտաց փոխանակ:
Ահա գիւաց ըսպասեն քեզ
Ելեալ փաղանգ 'ի կըրկէս.
Եւ երկնաչափ քեզ մենքենայ
Հանդէպ նոցուն կանգնեալ կայ:
Շնչեսցէ Տէր, և 'ի մօտոյ
Աւերակացն 'ի վերոյ
Անցեալ կացցես քաջ վերելեակ
Տիեզերաց նըշաւակ.
Հապա և մեք 'ի պար անցցուք,
Մերոց դասուց օրհնեցուք

Ահա շեփորք յեթերս հընչեն՝՝ .
Զայս ասացեալ սաւառնեն ։
Սուրբ Սիոնի Մուսայք հրաբուն ,
Դուք ըզմատուն դողդոջուն
Զօրացուցէք յիմաստ 'ւ 'ի բան ,
Տաղիս նատեալ ոստիկան ,
Զի ըզգործի երգեմ վեհին ,
Զոր առ Ճարտար 'ի ձեռին ,
Անօթ կոփեալ զարդ գեղանի
Իւր պալատան արժանի ։
Գործի կոփեալ 'ի տարտարոս ,
Շէս դու արժան , Ուրբանոս ,
Իմոյ տաղիս կալ Նըպատակ
Կորզեալ յինէն մըրցանակ .
Զի Ճարտարին վարեալ ըզքեզ ,
Նորա աջոյն է հանդէս .
Հապա և իմ խղճ Նըւագի
Նորուն 'ի սպաս խառնեսցի ։
Տէր , քո գաղտնի են դատաստանք ,
Ինձ 'ի քննել բազմավտանգ .
Մըտաց ըզթեւս ամիոփեցից
Քոց հետեւեալ ընթացից ։
Ըզքեզ կալեալ , ո՛վ Պահանորդ ,
Ուղղոյս անհետ առաջնորդ ։

Մինչ զբաղթնոց սուրբ գումարտակ
Ընդ Քրիստինեայ մերցանակ
Ի զօրութիւն վեհ արքային
Յաշ խոյժ 'ի սիրտ երգէին,
Զահի հարեալ թէ յաղթեցաւ
Տարտարոսին խշման սեաւ
Հնչեաց շեփոր, գումարեցան
Մերերկայոյզ 'ի յատեան,
Իբրև տերևք յուժգին հողմոյ
Ծրփեալք յայերս աշնայնոյ։
Լաւարուք ինձ, գոչէ, ո՛վ քաջք,
Ձեր խակ այսօր տեսին աչք,
Զի պարգեւանակ մարտ վրկային
Գունդք անմահիցն երգեցին,
Այսօր լաւեալ յՈւրբանոսէ
Թէ զկեանս վաղիւ վախճանէ։
Ախոյեանք քաջք, լաւայք ընդէր,
Ո՞ւր խիզախմունք նախկին ձեր.
Այլ մի՛ եթէ զէնք բրեցան
Ձեր դաւանաց բազմազան,
Եւ դոյզն աղջկան գիրգ և տրկար
Մեզ յաղթեացէ՞ բազկին կար.
Խորհրդականք, է՞ ոք 'ի ձէնջ,
Որոյ ի՞ցէ փառաց տենչ,

Եւ իմ երկրորդ նստել յաջոյս
Յարքունական 'ի գահոյս,
Անցցէ 'ի մէջ իւրովքն հանդերձ։
Քան ըզխաղալ ընդ տարերց,
Նոցին խառնուրդ դոյզն այս զանգուած
Է աննրկուն քաջ բազկաց։
Զի կամք վեհին որ յաղթեաց մեզ,
Նոյն ընդ սորա էլ հանդէս։
Ճախրեաց Բաալ ստամբակ գնդաւ,
Ասպարապետ դիմագրաւ,
Ճակատ ուղղեալ ուժգին գոչէր,
Ահա կացի ես, յի՛ս Տէր։
Մի՛ ըզվաստակս իմ մոռանար,
Զի իմ դաւանք բազմահնար
Ածին ընդ քեզ ըզսիրասուն
Մին յընտրելոցն իւր դասուն
Նորին գրկաց Թափեալ ըզնա,
Որում Թափուր գահն է վկայ։
"Այս Աստուծոյ աւար Թափեալ"
Ոյր 'ի Ճակատ կայ գրոշմեալ։
Ո՞չ նոյն բազուկ զամենայաղԹ
Ճակատագրեաց ինձ ըզբաղդ,
Եւ գոռ փաղանգ չիցե՞ն սոքին,
Ոյց յաղԹանակք սաւառնին

Ասա 'ի գաւթիս վեհ պալատան
Քեզ իշխանիդ Նուիրական.
Ոչ ինչ մաղթեմ այլ մըրցանակ,
Ոչ արքունի գահ և թագ,
Այլ 'ի վերայ սեմոց դըրաց
Ոսկեքանդակ զայս կիտուած.
„ Յաղթող բազկին վեհ Բաալայ
Քրիստինէ ասա է վըկայ,
Թիւ ընտրելոց թերի կացցէ
Յորչափ Բաալ անմահ է „ :
Զայս ասացեալ լըռեաց անդէն.
Վազեաց իշխանն 'ի գահէն,
Ըզ Բաալայ առեալ զաջոյն
„ Երդումն ասէ լեցի սոյն.
Դարձցի յաճիւն Նըւիրական
Այս գահ վեհիս հանգըստեան,
Եւ իմ նստեալ հանդէպ մոխրին
Յաւք հեծուլթեանս բազմացին „ :
Սարսեաց դըժոխք թնդմամբ մեծաւ,
Ատեանն իսկոյն ցրուեցաւ :
Ճեպեաց Բաալ յասպար մըկունդ
Զիւր ըզբանակ դիւագունդ,
Յերկիր խաւար գետ ընթանայր
Հըրոյ գոգցեա 'ի ոիպալ :

Մինչ Ուրբանոս նստէր գահոյս
Ի գիշերին խուովայոյզ,
Զի ոչ եգիտ 'ի սիրտ նորուն
Զիւր օթարան քաղցրիկ քուն,
Տեսիլ ահեղ յանկարծակի
Աչաց նորին հարկանի,
Գունդ լուսազգեաց զինուորեալ,
Յորոց միջի կայր Բասալ
Աստուածատիպ և ահաւոր
Հեծեալ 'ի ձի թեւաւոր.
Թռուցեալ եկաց հուպ առ նրմա,
Կշռեալ ըզսուրն ըսպառնայ,
„Ոչ վիճարդեան ըստեղծին դիք,
Ոչ զաղեաց շար պրղընձիք.
Մի մեղեցես օրիորդին,
Եւ մի կացցէ 'ի բանդին.
Այլ հեռաւոր 'ի կղզի մի,
Անդ ճողոպրեալ ապրեսցի.
Ապ' եթէ ոչ, մեռցիս մահու
Մինչ չև ծագեալ արեւու"։
Զայս ասացեալ հանդերձ գնդաւ
Յայերս 'ի վեր սլացաւ։
Իսկ Ուրբանոս յահէն 'ի վայր
Ի գահոյիցն անկեալ կայր,

Զողջոյն գիշերն հարեալ գիւէն
Փրփուր ժայթքէր 'ի սրտէն.
Եւ արհաւիրք 'ի տան հնչէր
Ձայնից բոմբիւնք զայն գիշեր։
Բայց Քրիստինեայ շրթանց քընար,
Քերովբէից 'ի տիպար,
Ձև արփենեւոյն պարզեալ յերկիր
Փառացն ըզգեղ լուսափիր,
Զառաւօտին պաշտէր նրւագ
Վերառաքեալ զայս դրրուագ.
" Երկրրպագեմ, Տէր, 'ի սրտէ,
Դու ընտրեցեր յարգանդէ
Զիս Բարձրելոյդ երկրրպագու
Յելս և 'ի մուտս արևու.
Ձև լրրացեալ շրջան արփւոյն,
Նրւիրական սեղանոյն
Բոց ջահեսցի, պաղատիմ, Տէր,
Ողջակիզիս անձնանուէր։
Որ զիս թափեալ աւար խաչիւ
Երկնից հաներ 'ի պատիւ,
Այսօր հանցես բանդէ մարմնոյս
Մաղթեմ 'ի քէն, Տէր Յիսուս "։
Զայս ասացեալ յերկիր խոնարհ
Գեանամածեալ կայր յերկար։

Բայց Կիղեսի մըտաց խորհուրդ
Եւ ոչ սրտին հանդչէր գուռթ.
Ճեպեալ եհաս 'ի տուն բանտին
Աւետաբեր լեալ կուսին։
« Ո՛հ Քրիստինէ, այսօր ընդ քեզ
Զիարդ փուռթամ խօսել ես.
Աստուածք տեսլեամբ Ուրբանոսի
Երևեցան գիշերի.
Անգըլթուլթիւն սրտի նորա,
Իբրև մետաղ 'ի քըրայ,
Հալեալ լուծաւ յերագահաս
Յարժանակշիռ պատուհաս։
Երկինք համբուն ընդվայր գոռան,
Ոչ շանթ թափի կայծական,
Թէ չակնարկէ վեհն Արամազդ
Յոնիւքն իւրովք մեծասաստ,
Յասուին ընդդէմ առաքինւոյդ
Զաստուածս անգամ ած 'ի գուռթ։
Թէ գու ըզմայր քո Յանիկէ
Տեսանէիր, Քրիստինէ,
Յանմահութիւն փոխեալ գոգցես,
Որպէս այգուն տեսի ես.
Տրիտուր ասէր զայս կըշռեցին
Փոխան ցաւոց իմ սրտին.

Զի՞նչ փոխարէն ես անմահից
Այս երախտեաց հատուցից։
Եւ արդ կանխեալ ձեռի այսրէն,
Զի զքեզ հանեալ 'ի բանդէն,
Պրսակազարդ քեզ 'ի մեհեան
Տարցի նրէր գոհութեան՝՝։
Բանքն 'ի բերան մինչ դեռ էին,
Եհաս անդէն մայր նորին,
Կենդանութիւն ցայտէր յաչաց
Գեր քան զօրէնս մահացուաց.
Աշխուժալից և սրտին վառ
Վարէր 'ի դուրս զայս բարբառ։
՝՝Որդեակ իմ, քաղցրիկ որդեակ,
Քեզ կրշուեցին մրրցանակ
Հանուրց յաղթող աչ անմահից,
Բիւր արժանի համբուրից.
Սիրան է նոցին բուրվառ խնկոց,
Եռանդ մրտաց ախորժ բոց.
Ոչ 'ի հնչիւն ձայնից Աստուած
Եւ ոչ հաճի թիւր կարծեաց։
Կարծիք մոլար հարան 'ի քեզ,
Կարդալ զԱստուածս յասպարէզ.
Այլ արդ գիտա, զի հաշտ ակամբ
Յերկնից նատեալ պատրաստամբ

Հային 'ի քեզ յերկրպագուս
Եւ ոչ իբրև յանարգուս ,
Մի՛ աննըւէր երևեսցիս
Յայս վայելեալ երախտիս :
Արդ կակղացաւ սիրտ ապառում
Դըժնէամիտ ծնողին քում.
Եկ երթիցուք ձօն գրկալիր
Ընդ մեզ առեալ և նախիր ,
Հանել նըւէր և սպանդ զոհից
Մեր բարերար Անմահ դից " :
" Խաբիս խաբիս , ոչ Քրիստինէ
Գայցէ ընդ քեզ , Յանիկէ .
Զիա՞րդ , աւա՜ղ, դեռ չիմացայք ,
Զի քաղցր են ինձ այս շըղթայք .
Եւ Ճշմարիտ յաղթանակի
Քրիստիանէ ակն ունի :
Ոչ զոր կըշռեն դեպք և աշխարհ ,
Ոըք ձեզ թուին բարերար ,
Այլ զոր ձօնէ Տէրն Եթերին
Փառք անկապուտ այն լեցին :
Ուրբանոսի մոցեն 'ի տուն
Սանդարամետք թէ համբուն ,
Զիս հըզօրին յանյաղթ ձեռաց
Ոչ կորզեսցեն ջոկք դիւաց .

Նախանձեցան ընդ պերճ պըսակ
Ինձ բոլորեալ մըրցանակ,
Եւ համագունդ լարեալ թակարդ
Որսալ ճըգնին տարապարտ։
Ահ, այսօր իսկ բոսորաբուխ
Ծիրանազգեաց թագ 'ի գլուխ
Թեւապարեալ յերկինս յերկրէ
Տեսանէիք զԲրիստինէ,
Թէ սատանի արգելեալ չէր
Ահեղ գընդաւ զայս գիշեր
ԶՈւրբանոսի զայրոյթ սրտին.
Զաջն համբուրեմ Յիսուսին,
Որ զիս թափէ կըռուեալ ընդ իմ
Ընդ թշնամին ոխերիմ,
Եւ որ բանայ նոր ասպարէս
Իւր զօրութեանն 'ի հանդէս,
Զիս պսակաւոր յաղթայութեան
Ճեմեցուցեալ յաւիտեան"։

Յաւարտ բանիցըն Քրիստինեայ
Ալք հասանեն հինգ դժնեայ.
Շրջապատեալ ըզկոյսն ամբիծ,
Զերթ գիշատանձ բազէից
Յանգութ մագիլս անմեղ տատրակ
Անկեալ նոցուն 'ի ճարակ։

Վարեալ տանին անդէն յատեան
Իւր ծընողին յանդիման։
Անդ Ուրբանոս ժըպիտ դիմաք
Բանիւք փորձէր բազմամոք,
« Կալջիր, ասէ, շնորհ աստուածոց,
Որով շինջաւ սրտիս բոց.
Ըզքո արիւնդ ժանտ և զազիր
Մի՛ ծըծեսցէ այս երկիր.
Սահմանդ լեցի ովկիանոս
Եւ մի՛ մոցես յՈղիմպոս, 1
Ծարաւատանջ սովալըլուկ
Կեանս վարեսցես չարաշուք,
Եւ յաւազուտս ովկիանու
Պայքարեսցիս ընդ մահու։
Առէք հապա, տուք 'ի նաւակ,
Ձէ Քրիստոնէ իմ զաւակ.
Որ Աստուածոց չառնէ պատիւ
Մի՛ լուսասցի նըմա տիւ »։
« Ո՞ր Աստուածոցդ, աղէ ասա՛,
Եւ ո՛ յարգի 'ի սոսա։
Այր աստուածոց սանդարամեռք,
Անհետասցին նոցին ճեռք,
Ոյք ցանեցին զայս պիղծ աղանդ
Ընդ տիեզերս աստ և անդ։

Թող եղեցի, ես չերկընչիմ,
Ովկիանոս իմ շիրիմ,
Եւ կամ կղզեակն այն հեռաւոր,
Ուր ընչեցից մենաւոր
Օդ անապակ ընդ վայրենեաց,
Ոյք ճանաչեն զիմ Աստուած։
Մահուն երկիւղ զիս, Ուրբանէ,
Եւ տանջանաց, ոչ պատրէ։
Հրապոյրք փառաց այս կենցաղոյս
Նոցուն ևեթ է խրախոյս,
Որք այս կենաց յուսացեալ են,
Բնաւից վախճան զմահն ասեն.
Բայց որ 'ի սիրտ անմահութեան
Վառի ճաճանչ արքազան,
Անցեալ բազմին գեր 'ի վերոյ
Ի կամս միոյն Աստուծոյ։
Եկ երթիցուք, օ՛ն զիս տարայք,
Արդարութեան պաշտօնեայք"։
"Հապա առէք, զի մի տեսից
Զանարգուս զայս մերոց դից"։
Վաղվաղակի առեալ տանին,
Եւ Քրիստինէ խնդագին
Ընդ կարճ ուղին զընթացս ուղղէր
Ակընկառոյց 'ի յերթեր,

Երբ գոգ առեալ ետես պատրաստ
Թըռչարանին զառագաստ,
Առ նաւաստին վազեաց իսկոյն,
Ձըւել պնդէր վաղագոյն։
Ընչէր յաջող և հողմ քաղցրիկ,
Ձեռն արկ ուղղիչն 'ի սամիք։
Կայր 'ի հեռուստ և Յանիկէ,
Հառաչելով 'ի սրտէ
Դիտէր զընթէր զնաւին ընթացս,
Թէ ի՞նչ յաղթէր մըկանանց։
"Անիծեա՛լ դիք, գոչէր լեղի,
Ձիս արարէք անորդի.
Ո՞ւր են շանթիք թէ աստուածք էք.
Կեանք վըշտամբեր չեն ինձ պէտք։
Անիծեալ ժամ յորում ես ըլայս
Նախկին տեսի կենցաղոյս,
Ինձ էր չեղև շըքեղ դամբան
Մօրն իմ արգանդ 'ի սկըզբան"։
Իսկ Քրիստինէ մերթ գոհանայր
Փըղձկեալ 'ի սիրտ, և մերթ լայր.
"Ի հրամանէդ ես ընդ երկնիւք
Ընչեմ ասէր, Տէր, զայս սիւք.
Ընդ ընտրեալոցըդ պատկաղարդ
Ես ձեմէի յերկինս ցարդ.

Բայց էմ հնազանդ կամաց քոյին,
Որպէս կամիս եղիցին »։
Գոչումն յանկարծ յանդընդապատոյտ
Ճեպեաց ըզդէս 'ի մի կոյտ.
Տարտարոսին թնդան սահմանք
Ուժգին փողոցն յարձագանգ։
Որպէս յորժամ բացուստ 'ի բաց
Բոցք հատանին յամպրոպաց,
Սապէս Բաալ հասեալ անդէն,
Շանթք 'ի դիմաց փայլակեն։
Ի բերանոյն ցայտեն բարբառք,
Զերթ 'ի վրէպ ժայռք հրավառք.
« Տեսէք զայդ նաւ սաղապաճեմ
Ի մօտ կղզիս եդեալ դէմ,
Վրդովեցէք մրրրկայոյզ,
Անհետասցին ջրասոյզ »։
Բաղխեն զայերս սրանան հապճեպ,
Մինչ նաւն երթայր բարեդէպ,
Հա մրթագնին երկինք վերուստ
Դիզեալ ամպովք լի հարուստ,
Հա և հողմունք ծայրս արձակեն,
Զաւազ ծովուն ամբոխեն։
Լեռնակուտակ ալեաց դիզան
Յասահղատուն ամբառնան

Եւ մերթ ըզնաւն 'ի խորս անհուն
Խորասուզեն յալս ծովուն,
Կարկառք ահեղք անտի 'ւ ասի
Ահաբեկեն զնաւաստի։
Բայց Քրիստոնէ յերկինս 'ի վեր
Ակընկառոյց անվեհեր,
Բազկատարած մաղթէր առ այն
Որ գոյացոյց զամենայն,
Ոյր զօրութեամբ հաստիչ մատին
Կան տիեզերք 'ի կարգին։
Լեռնակարկառ յալէաց վերայ
Նաւակն խկոյն պերճ սիգայ.
Որպէս եթէ հեշտ Զեփիւռոս
Առեալ տանէր բազմազբօս.
Եւ զերթ արծուի 'ի թռիչս անգայթ
Ալեացն 'ի կոյտ լեռնացայտ,
Նա լիաթև ճախրէր ոստնոյր
Ծաղրեալ զալիսն անհամբոյր.
Իսկ գունդ գիւացն հատեալ սլանայր
'Դ հարաւ հիւսիս ծայր 'ի ծայր,
Անդէն գուպար ահեղ ռազմի
Ի մէջ գիւացն այն խառնի,
Նոցին տագնապ յամօթապարտ,
Զի այն նաւակ գիմամարտ,

Յաղթէր հողմոց, երթեալ երթայր
Եւ 'ի կըղզին մերձենայր։
Նորօրինակ մարտ անդ մղէր.
Թողեալ ըզծուէն 'ի մի թեր,
Ըզյաղթ լերինս երկնահանդէտ
Արձակէին միմեանց հետ։
Իսկ խուճապեալ մի ոմն անդէն
Վազէ արտաքս 'ի դնդէն,
Տարտարոսին յանկոխ սահման
Նստեալ ուրեք մութ յանկեան,
Աչք յարտասուս ձեռն 'ի ծնօտի
Ողբայ զվիճակն իւր նախնի։
«Երբեմն յեթերս արփւոյն տիպար
Լուսազգեցիցն էս 'ի պար,
Անմահ փառաց Աստուածութեան
Զերգս երգէաք միաբան...
Անիծեալ ժամ, ո՜հ մինչ հընչէր
Շէփորն այն ժանտ ընդ եթեր.
Տօն ցնծութեան էս կարծէի
Որպէս յայլուս նըւագի.
Այլ զի՜նչ այն տօն. յուզէր երկին
Ի ծուփս մարտի ահագին։
Ո՜հ նըստէի էս անդ հանդարտ,
Ոչ որպէս առաջ նստիմ արդ.

Մի ոմն ահա մերձեալ առ իս
«Ասէն, ասէ, հիմ նատիս.
Զիարդ ճգնին, ոչ տեսանես,
Ընկերակիցք աստ ընդ մեզ։
Ես միամիտ յայն բան յարեայ,
Սրացեալ ընդ գունտն աստեղեայ,
Տեսի անդէն ես դէմ ընդ դէմ
Ի մէջ եղբարց մարտ դրժիեմ.
Մըտի 'ի կողմն ելբև յիմար
Ուր փայլակէր բեղիար։
Հանդիպակաց գաբրիէլեան
Կողմն գրտեալ յաղթական,
Խաւարազգեաց յայս մութ անդունդ
Թօթափեցաք գունդագունդ։
Եւ արդ դարձեալ գամք 'ի վերսեր
Եդեալ 'ի կշիռ ըզկար մեր
Ընդ բարձրելոյն բաղկացն հանդէս,
Որ զայս սահման կնքեաց մեզ»։
Մինչ սա այսպէս զեղոյր գանգատ
Թախիծ սրտիւ յուսահատ,
Հնչէ շեփոր, խառնուրդ մարտի
Ըզկայ առեալ հանդարտի,
Եւ համագունդ մեծ խուճապաւ
Խորասուզին ընդ երկրաւ։

Նաեւ ալէկոծ հաս 'ի կղզին,
Ըզկոյսն 'ի վայր իջուցին.
Դարձուցանեն ըզզէկն խակոյն,
Շնչէր և հողմ բարեմոյն։
Բայց Քրիստոնէ հայէր ժըպիտ
Շուրջ ըզվայրոքն անքըթիթ,
Եւ նախ մածեալ խոնարհ յերկիր,
Յաստուածախօսն 'ի դաբիր
Կարծէր զերծեալ 'ի պիղծ մարդոց,
Յանտառախիտըս ծառոց
Ճեմէր սիգայր, որպէս Եւայ
Ի պարտիզին Եդեմայ,
Եւ հիասքանչ վերառաքէր
Նըւագս օրհնից 'ի յերթեր։
Որպէս յորժամ թռուցեալ ճնճղուկ
Ի վանդակէն իւր անձուկ
Իւր որսողին ոտընհարու
Օդապարեալ թինդս առնու
Ընդ դաշտ ընդ բլուր վայր 'ի վայրէ,
Ըզնոյն առնէր Քրիստոնէ։
Ըստուերք ծառոց երկայնէին,
Նըշոյլ ճրագէր և լուսին,
Մուտք արևուն բոլորածիր
Ներկեալ համակ 'ի կարմիր,

Հրաշէկ 'ի գոյն ըզծով վառէր
Թաղեալ յալիս զնուր պատկեր,
Փոխանակեաց լուսինն ըզնա,
Վառի կամարն ասահղեայ.
Ճրագուողելով դասակ դասակ
Գան 'ի դագար ոսոց բնակք։
Քրիստիանէ անդէն նստաւ
Ըստուարաբաբուն ընդ սօսեաւ.
Քերեալ զափամբք վէտ վէտ ալիք
Հասուցին հիւսեն դրրուատիք.
Մինչ շնչաւորք և մարդ համբուն
Կան դագարեալ քաղցր 'ի քուն,
Ըզքրիստինեայ շարժեալ գորով
Մրշտամբռունչն ալեօք ծով,
Եւ անմրռունչ խորհրդածու
Լինէր գործոցն Աստուծոյ։
Զէղուած սրտին քաղցր արտասուք
Քընոյ ածէր նրմա շուք,
Եւ Զէփիւռոս շնչեալ հեզիկ
Փակէ զաչկունսն աւասիկ։
Զուարթնոց անդէն զոյգ լուսարփի
Շուրջ ըզկուսիւ սաւառնի,
Թռուցեալ պրսակ 'ի հիւս ծաղկանց,
Գործ անմահից գերազանց,

Վէհ հովանի սոքա կուսին
Զողջոյն գիշերն առնէին,
Զի մի գազանք կամ արհաւիրք
Գիշերային այն պատիրք
Եկեալ յանուրջըս խօլական
Արկցեն քընոյն խոչ խաւիան։
Մինչ սա նընջէր անոյշ 'ի քուն,
Հիւրք անտառին այն զարթնուն.
Զառաւօտին 'ի նուրբ հադագ
Սոխակ պաշտէ նախ նըւագ.
Ըզդայլայլիկ կրկնեն անձաւք,
Ում գաշնակցեալ և այլ հաւք
Զարփւոյն պայծառ զէլս ողջունեն
Ընդ արարածս համօրէն։
Զարթնու յանկարծ և Քրիստինէ,
Ըզնա արևն ողջունէ.
Պարզեալ շրթունս վաղվաղակի
Օդականաց ձայնակցի.
«Սերովբէից գոնդ լուսերամ
Եթերափակ յերկնից սեամ
Օրհնեն ըզքեզ, ամենից Տէր,
Աստղահանդերձ և եթեր,
Եւ արարածք ըզքեզ համբուն,
Ըզքեզ ալիքս այս ծովուն,

Ի դայլայլիկս օրհնեն թըռչունք,
Ըզքեզ մարդկան և շըրթունք.
Նոցին և ես տէր ձայնակից
Յաւէրժ ըզքեզ օրհնեցից»։

Այգունն այսպէս զափամբ ճեմէր
Սրտիւ մըտօք աղօթկէր,
Տարփայը երկնից վառեալ սիրով,
«Ողթայ ոտից արկէր, ծով։
Ո՛ զիս տանէր առ Ուրբանոս,
Եկ ա՛ռ 'ի թեւս զիս, Եւրոս,
Զի ես 'ի ծոց սիրելւոյն իմ,
Իմ սիրելւոյն թըռանիմ»։
Բայց տես զԵւրոս որպէս դըժնեայ
Խաղայ յալեացն 'ի վերայ,
Վարեալ նաւակ լի առագաստ
Ըսպառնալեօք ալեաստ,
Զընթացս ուղւոյն բռնադատէր
Կըղզւոյն առնել առ ընթեր.
Մըրրկայոյզ յալեաց դիզան
Ճօճէր նաւին յաղթ իրան։
Ի մըրրկէն մերկ և թափուր
Նաւորդքն անկեալ մաղապուր,
Յոյզ և խնդիր սուր դիտէին
Հանդիպակաց ըզկըղզին.

Զընթացս ուղղէն նաւուն անդէն,
Ճարել զնուրեանց ըզպարէն.
Եւ մօտ քերեալ անդ առ կըղզեաւ,
Մալուխս տանին մակուկաւ,
Եւ հաստաբուն անդ 'ի կաղնի
Կապէն ըզնաւն առ վայր մի.
Աղեղնաւորք յորս ընթանան,
Եւ հանդիպեալ այծեման,
Սուր յընթացից կասէն ըզնա,
Անկաւ անդէն անըզգայ.
Բարձեալ 'ի յուս զայն որս անդին
Դառնան 'ի նաւ խնդագին,
Խարոյկ արկին առ ծովեզերք,
Ի հանդերձանս բազմակերպ
Աշխատէին իւրաքանչիւր
Հանել զայծեամն 'ի շամփուր.
Դիտէր հեռուստ և Քրիստինէ,
Մօտել կամէր, այլ չիշխէ։
Ոգի առեալ յաւարտ ճաշոյն,
Ի բան 'ւ 'ի դէմ բարեմոյն
Տեղեկացեալ խոնարհաբար
Անդէն ուղւոյն ըզպատճառ,
Եւ թէ գընան դէպ 'ի Տիւրոս,
"Իշխանն, ասէ, Ուրբանոս

Հայը իմ է նա ». զայս մինչ լուան,
Միմեանց 'ի դէմն հայեցան։
« Մատն ես երկնից զայս ճանաչեմ,
Եւ ոչ ձախող բազդ դրժեմ.
Սովալըլուկ զի մի մեռայց,
Այս պատեհաւս էլ ինձ յայց,
Զի մի գիպի չար ձեզ ուստեք
Զարտօսր իմ մի անտեսէք »։
Օրիորդին բանք գեղեցիկ
Ի գուլթ ածեն ըզմարդիկ.
Տանել ըզնա հաճին խակոյն.
Լուծեալ ըզնաւն 'ի կաղնոյն,
Եւ 'ի մակոյկն ելեալ հապճեպ
Ըզհողմն որսան բարեգէպ.
Մըղեն ըզնաւն ալիք ալեօք
Առագաստիցն առեալ գոդ։
Ի թռիչ հրմուտ թըռչուն այնպէս
Թըռչել երբէք չտեսի ես։
Բըրգունքն հեռուստ հա նշմարին
Ապողոնեայ տաճարին։
Տիւրոս քաղաք ծովեզերեայ,
Որ սիրելին առ քեզ գայ,
Ուրբանոսի աւետիս տուր,
Եւ Յանիկեայ տար դու լուր։

Առաքաստից գոգ ի Ջանեն,
Ըզկայ առնու նաւն անդէն,
Եւ Քրիստինէ 'ի դէմն զբաբթ
« Զիս յեզը, ասէ, տարայք արդ,
Եւ հատուցումն արդարագատ
Լիցի յերկնուստ ձեզ առատ։
Զիք ինչ վեհ գործ երկնից հաճոյ
Քան ձեռքն տալ հէք մարդոյ.
Երախտագործ կենացս ըզձեզ,
Ցորչափ զայս սիւք ընչեմ ես,
Եւ մինչ ելցեն երկինք ինձ յայց
Ըզձեզ այո՛ ես ծանեայց։
Ի ձեր յաչաց մի արտասուք
Յաւէրժ մահուն քամէ սուգ.
Ցորչափ հողմոց տայք առագաստ
Ծով մի մնընչէ ալեսաստ.
Հարկեալ Թիկունս ձեզ կապուտակ
Ի ձեր տարցի նըպատակ»։
Ընդ գեղ բանից կրթեալ յապուշ
Սիրտ մարդկանն այն վառէր յոյժ։
Զոյգ պատանեաց անդէն առոյգ
Առեալ ըզնա 'ի մակոյկ,
Հաս 'ի ցամաք, և Քրիստինէ
Անժոյժ 'ի դուրս ելանէ.

Զերթ գառն անմեղ վազէ 'ի սպանդ
Ի լանջ' ւ 'ի սիրտ անվրկանդ։
Թէ «Քրիստինէ Եհաս 'ի տուն»,
Ծառայքն անդէն լուր ետուն.
Իսկ Ուրբանոս վայրագ գազան
Ըսպառնալեօք բազմազան
Ուժգին գոչմամբ, որպէս Եւրոս
Ի մէջ վիմաց խորափոս
Բոմբիւն ձայնից խիստ արձակէ,
Հանգոյն գալուստն հարցանէ.
Եւ Քրիստինէ քաղցր հայեցիւք
«Վարեալ ըզնաւն յաջող սիւք
Հասաք, ասէ, ողջամբ այսրէն
Զանդուլ վրիժուցդ առ դու քէն։
«Լոկ քէն վրիժուց դու մի կարծեր,
Ո՛հ Քրիստինէ վըշտամբեր.
Գիտեմ կըշռել շըքեղ պըսակ
Քոյոց Ճըգանց փոխանակ.
Ասա միայն թէ դաւանիս,
Եւ թէ պաշտես ըզմեր դիս»։
«Ըզդարշելիսդ օն տար 'ի բաց,
Եւ ըզխորհուրդդ այդ դիւաց,
Ես մի Աստուած, միայն ըզնա
Հանուրց պաշտեմ դերակայ,

Բնութիւնք համայն և ջրոք տարերք,
Նովաւ սանձին տիեզերք.
Եկ Ուրբանէ, և դու Ծանիր,
Այդպէս անմիտ մի լինիր։
Կոփեալ 'ի մուրճ և 'ի տապար
Ոսկի արծաթ փայտ և քար.
Ոչ զօրութիւնք կենդանականք,
Եւ ոչ իմիք բաւականք,
Ընդնոցանէ դուք խորհիք լոկ,
Գերունակք են նոքա ձեօք"։
Նա զերթ վարաղ Ժանիս սրտէր,
"Կարկեաց աղջիկ վաստրեր"
Գոչեաց անդէն հայրն ահագին.
Ծառայքն 'ի վեր վազեցին,
Զինու վառեալք ամենեքեան
Կուսին կացին յանդիման.
"Հարէք ըզդա, հրաման է ձեզ,
Ըզմէտ ցաստանս արդ տեսցես"։
Գազանք վայրի, երկինք հայիս,
Առին ըզկոյսն 'ի Ժանիս.
Դեռ հարկանէք անգութ մարդիկ
Զիրան կուսին այն փափկիկ։
Շուշանափայլ կուսին իրան
Ներկեալ համակ 'ի յորդան,

Զերթ ծիածան ցողէր ճաճանչ,
Կապոյտ կարմիր ընդ կանաչ,
Գեղեցկաթոյր հարսն յօրինեալ
Պարկեշտ դիմաքն արփափայլ։
Աչք կորովիք հա թուլացան
Հաստաբազուկք այն մարդկան,
Ձաղկանքն հովէր ըզսիրտ կուսին
Վառեալ 'ի սէր Յիսուսին,
Որպէս ըզտօթ ամարայնոյ
Կաթիլք թափեալք անձրևոյ։
Եւ առ իշխան դարձեալ ասէ,
"Ա՛յ դիւաբախ Ուրբանէ,
Ըզզօրութիւնն ոչ խմանաս,
Զիարդ պահիմ անվընաս.
Գաղանաց իսկ շատ այն ճաղկանք
Զոր ինձ Եառն զօրականք.
Փաղանգ զօրաց աղէ հանցես
Ընդ իս այսօր յասպարէս.
Ոչ քամեսցեն նոցին բազուկք
Յիմոց աչացս արտասուք։
Ալ Անմահին ինձ հովանի
Յօրհաս պահուն եղանի"։
Ուրբանոսի սրտին զայրոյթ
Վախճան խորհէր վաղ ընդ փոյթ,

«Առցին քերոցք և կախաղան»,
Զօրականին էտ հրաման։
Կախեն ըզկոյան անդէն ահա,
Որպէս ըզնոյն սաբեկայ,
Յանտաշ սեղան առաւ նրուէր
Յողջակիզել 'ի սուրբ սէր։
Քերոցք Ճիրան երկաթազէն
Պատառ պատառ վայր հոսեն
Զհատորս մարմնոյն արիւնազանգ,
Այլ նա պահի անվրտանգ։
Հայրն արձակել ըզՔրիստինէ
Անգութ դահճացն ակնարկէ։
Արիւնթաթաւ իջուցանեն
Զանբիծ նրուէրն 'ի փայտէն,
Ման 'ի մարմնոյն առեալ կուսին
Արիաբար 'ի ձեռին,
«Յագիր, ասէ, քաղցեալ դազան»,
Հօրն ընկեցեալ յանդիման։
Ուրբանոսի ժպտեալ տակաւ,
«Ո՞չ իմանաս, ասէ, ցաւ։
Ըզկատակդ օն թողեալ 'ի բաց,
Դու 'ի կամս իմ խոնարհեաց։
Դարձիր զոհեա մեր աստուածոց,
Եւ վայելեա 'ի մեր ծոց։

Ապ՝ եթէ ոչ՝ պատուհասից
Քեզ նոր հընարս նիւթեցից.
Տեսցուք Աստուած. զոր դու պաշտես
Եւ յոր յուսաս, փրկէ զքեզ՝՝ :
«Ո՞վ Ուրբանէ, հէք զաչացու,
Ընդէր 'ի միտ չառնուս դու,
Ոյր զօրութեամբ կալայ ըզդէմ
Պատուհասից քոց դրժխեմ.
Ո՞չ նոյն բազուկ յերկինս շարեաց
Ըզբոյսս անշարժ աստեղաց.
Ըսպէք մարմնոյս, զոր տեսանես,
Նոցուն անցցէ 'ի հանդէս՝՝ :
Գազանացեալ Ուրբանոսի,
«Պարծանքդ, ասէ, արդ տեսցի.
Առէք ըզդա, վառեցէք հուր,
Ածէք անիւ սայրասուր՝՝.
Եւ կապեցին յանուոյն վերայ,
Զերթ 'ի կամարն աստեղեայ
Երևակին պայծառ մանեակ,
Փայլէր յանուոյն շրջանակ :
Արկեալ նեղքոյ ծրծումբ և ձէթ,
Փոխան զգեստուց սեթևեթ.
Ուստ առեալ զերթ ծիածան
Ի գիլ անուոյն իւր իրան,

Զարեգակամբ որպէս լուսին
Շող արձակէր արփային։
Եւ ամբարձեալ զաչս 'ի յերթէր
Արտասուագին աղօթէր.
«Որ ցարդ, դու տէր, պահեցեր զիս,
Զըգեա զաչ քո ի զարդիս.
Որպէս երբեմն ըզհնոց հրոյն
Փոխեա 'ի ցող և ըզսոյն,
Զի աչք տեսցեն անհաւատից,
Թէ դու տիրես համայնից»։
Հուր ցօղանայր շուրջ ըզկուսիս,
Եւ զանհաւատս զերթ խրոխ
Բոցակիզեալ լուծէր յաճիւն
Յարշաւասոյր շառաչիւն։
Իշխանն յանուն ըզՔրիստոնէ
Ի ջուցանել հրամայէ.
Եւ հարցանէ, «Ուստի ուսար,
Աստ դու ինձ, զայդ հընար.
Դառն ես տանջանս ածել գիտեմ,
Ոյց ոչ կացցես դու ընդդէմ.
Առից ըզվրէժս անարգանաց,
Տեսցուք փրկէ՞ քո Աստուած»։
Ցերբ, կոյն ասէ, ասացից քեզ.
Ի Աստուծոյս այս հանդէս.

Թէ ինքը անցի , դու չիմանաս ,
Յամենայնէ անվընաս ։
Նա ուսոյց ինձ զօտարոտիս ,
Եւ ոչ ըզձէր պաշտել դիս ։
Այլ քո վերայ բացցէ երկին
Զըշտեմարանս ահագին ,
Սըղոխք սըրբոց արեացն յեթեր
Զոր 'ի յատակս այս հեղեր ,
Ի դըժոխոց բաւիղս անեալ
Յորժամ երթաս անկանեալ ,
Կոփեալ շանթիս արձակեսցեն
Ի քո գըլուխդ , անօրէն »։
Առիւծացեալ Ուրբանոսի
Ի սիրտ խոցեալ և յոգի ,
Հըրամայեաց արիւնթաթախ
Ի բանդ տանել անարաղ ։
Իսկ կոյսն ըզհետս արեամբ նեարկեալ ,
Վազէր 'ի բանդ սիգաքայլ ,
Միեղջերուին այն 'ի տիպար ,
Յարիւն կողին նեռահար
Ըշտապ վազիւք շաւիղս գըծէ ,
Յականակիտ աղբերէ
Հովահարել սրտին ըզտապ
Մահուն անկեալ 'ի տագնապ ։

Բանտին ըզդուռն աղխեալ երթան,
Իսկ կոյսն անդէն 'ի մրթան
Զոր նահատակքն ներկեցին
Ջերմ համբուրէր ըզգետին
Բոսորաբուղխ արեամբ իւրեանց,
Հանուրց գլուխ գերազանց,
Եւ առ Աստուած փղձկեալ 'ի սէր
Զայն արտասուաց արձակէր.
"Աստուած բարձրեալ, դու զմարգարէն
Զյափշտակեալն 'ի կիտէն
Հաներ 'ի լոյս յահեղ խորոց,
Ցուցեալ զհանդէս բազկաց քոց:
Դու զԴանիէլ Ամբակումաւ,
Զ'ի քաղց նրբթեալն և ծարաւ,
Գուբն յառիւծուց ամենածախ,
Յանձնէ մերժեալ ըզզըմբաղ,
Կերակրեցեր. հայեաց առ իս,
Որ նրաւիմ 'ի բանտիս,
Եւ 'ի բարձանց զօգնութիւն քո
Առ տագնապեալս փութացո":

Անդէն յանկարծ որպէս փայլակ
Ի մէջ բանդին մէջ հրեշտակ.
Որմունք նրսեմ փայլէն իսկոյն
Արփիատիպ երփնագոյն:

Մատեաւ զուարթունն առ Քրիստինէ,
Ի սպիս հրպեալ բրժըշկէ,
Եւ կերակուր ընդ ըմպելի
Մատոյց նըմին լիուլի։
Սաւառնեցաւ հրեշտակն անդրէն,
Եւ վարսամին այն զօրէն
Որ 'ի մըռայլ ամբոց միջի
Սփռէ ճաճանչ գիշերի,
Շաւիղս հետոց յասպարէս ձիգ
Յորդէր նըշոյլ գեղեցիկ։
Եւ Քրիստինէ 'ի շող նորին
Վառէր փայլէր զերթ լուսին,
Անբիծ անվէր և ձիւնաթոյր
Ի սիրտ զըւարթ և անդոյր։
Մինչ սա այսպէս նստէր հանդարտ
Զերթ արշալոյս երփնազարդ,
Աբք հինգ յըղեալ գան 'ի հօրէն
Ըզքրիստինէ զի տարցեն.
Հասեալք 'ի բանդ ըզգիշերայն,
Առեալ տանին առ ժամայն,
Յորոց միջի կոյսըն փայլէր
Զերթ արուսեակն 'ի յերթեր։
Գիշերն 'ի թեւս մինչ սեւաթոյր
Յածի երկնից 'ի պարոյր,

Եւ մինչ զերկրաւ նատեալ յիւր սայլ
Զաշխարհակուրն ածէ մեայլ,
Բոյլք աստեղաց պայծառ շողան
Յիւրաքանչիւր 'ի կայան :
Յեզերք ծովուն ահա հասին ,
Եվ և արևն 'ի զընին ,
Փեռեկեցաւ բոլորածիր
Ահա երկին լուսապիր
Զգրվեսով կուսին , զոր 'ի նաւակ
Առեալ տանէր այն հրոսակ .
Ծով ըզթիկունս իւր թօթափէր ,
Զեղոյր ալեօքն անհամբեր :
Տէրն եթերին հանդիսատես
Նստաւ գահոյս յամպագէզ .
Գունդ հրեշտակաց շուրջանակի
Ըզգահոյիւք ծաւալի :
Սփռին յայերս շողք պլսակաց
Եւ ծածանմունք ծիրանեաց .
Զկիգ յասպարէզ շողք այերին
Զերկիրս յերկինս խառնեցին :
Դահճացն հասեալ 'ի խոր ծովուն
Ճրգնեալ բազկօքն անընկուն ,
Եւ զուլանէ արկեալ կուսին
Հատոր վիմի ահագին ,

Ընկենուին բարձեալ ըզնա ,
Այլ ծով զբերանն ոչ բանայ :
Խըզեալ կապոյն քարն ընկլուզաւ ,
Ոտք Քրիստինեայ ոչ թացաւ .
Զոյգ Զըւարթնոց հասեալ փութով
Մըտին նորուն ընդ անթով ,
Նա սաւառնէր որպէս փիւնիկ
Ոչ 'ի խարոյկ վաղանցիկ ,
Աստուածահոս յանանց 'ի սէր
Վառեալ 'ի սիրտ մըշտանուէր .
Անմահութեան փայլէր ճաճանչ
Ի դէմս կուսին հիասքանչ :
Փղձկեալ 'ի սիրտ ձայն արտասուաց
Վերամբառնայր առ Աստուած ,
" Դու որ նստիս յերկինս 'ի վեր ,
Ամենազօր բարձրեալ տէր ,
Տարերս սանձես դու զահարկու ,
Քեզ սալանայ ջուր ծովու ,
Յալից երկնից ցանդունդս երկրի
Քոյին հրաման կատարի .
Վերանըսեալ հանդիսատես
Դէմս աշխարհի փոփոխես ,
Յուցեալ զհանդէս քոյդ զօրութեան
Ի բիւր յեղեալ կերպարան .

Փառաւորեա զայ քո հրզօր
Նոր նորոգեալ զիս այսօր,
Սուրբ ծընընդեամբ աւազանին
Զիս ընկալցես վերըստին.
Ահա տացեն ինձ այս ալիք
Որդեգրութեան ըզկընիք։
Սաւառնեցան զոյգ զբաւարթնոց
Բերեալ պըսակ 'ի յամպոց,
Շուրջանակի բոլորեցաւ
Կոյն արփափայլ ծիրանեաւ։
Հընչեաց յայերս. այո՛, այո,
Ես եմ ալփա ես և օ։
Կամք իմ սահման ամենայնի,
Զոր խնդրեցեր եղիցի 2։
Զուարթուն ոգի, որ մերձ կայիր
Դու յանմատոյցն 'ի դաբիր,
Ըզսուրբ հանդէսն աղէ պատմեա
Զոր 'ի կամարն ատեղեայ
Հընչեցուցէք յանլուր տաւիղ
Յոսկի լարեալ շառաւիղ։
Երկինք անդրէն միապաղաղ
Զիւրն յարմարեաց առաստաղ,
Սաւառնեցան յայերս հրեշտակք
Հանեալ ըզկոյն 'ի ցամաք։

Զ ըսքանչելեաց տեսեալ մարդկան
Զհանդէսն ահեղ բացական ,
Ուրբանոսի տան աւեալք ,
Թէ « զՔրիստինէ զերծին դիք ։
Աղխեալ էր ծով ըղբերան իւր .
Որպէս ընդ հարթ և ընդ դիւր
Անդայթ ոտիւք Ճեմն առնոյր նա
Լոյծ մրկանանց 'ի վերայ ։
Անց 'ի ցամաք , մի մեղեցես ,
Գուցէ չարիք հասցէն քեզ » ։
Ուրբանոսի դէմքն ահարկու
Բերէր ըզոխպ առիւծու .
« Ոչ մեռայց ես , վայրագն ասէր ,
Սըրտմըտութեանս ըզմրթեր
Մինչ չև հեղեց 'ի Քրիստինէ ,
Ածէք այսրէն , հրաման է » ։
Ելին փութով արքն 'ի տանէն .
Իսկ Ուրբանոս 'ի սրտէն
Ի դուրս Ճախրէր կատաղաբար
Լի սպառնալեօք վայրապար ։
Զօրէն հողմոյ վառնեալ ընդ վայր
Ընդ ահագին լերանց սայր ,
Ի քարանձաւս մրտեալ թափով
Անդ մրռընչէ որպէս ծով ,

Սապէս վիսին չընչոյն յոլովանք
Ի տան հընչէր արձագանգ։
Կոյսն 'ի գահճաց փութով ածաւ
Գոռ իշխանին զառաջեաւ.
Բաց ըզբերան իւր Գրիսոլինէ,
Եւ ոչ հարցման ըսպասէ.
«Ա՜յ Ուրբանէ, մինչև ցե՞րբ դու
Կացցես Աջոյն անարգու,
Որ 'ի սկըզբան զերկինս ըստեղծ
Ընդ լուսաւոր բոյլս աստեղց.
Ապա զերկիր և որ 'ի նմա
Անթիւ չըքնաղ առարկայ,
Զոր տեսանեն աչքդ անարժան,
Եւ որ յաչացդ անտես կան,
Յովկիանու ծոց անթափանց
Պահեալ մըթերք մեծագանձ,
Եւ յալս երկրի թաղեալք 'ի մութ,
Յագահ ձեռաց անկապուտ։
Գեղ գեղեցիկ այս արարած
Զոր գոյացոյց իմ Աստուած,
Կարողութեան նորին վըկայ,
Մըտաբերել քեզ ո՞չ տայ։
Բոյլք աստեղաց կամարս յերկնից
Ո՞ըպէս շարին յանգոյ գից.

Կամ տիեզերք զնաթրդ կանգնին
Մինչ քար և փայտ ոչ գոյին ։
Քան ձեր աստուածքնախ են մարդիկ,
Եւ այլ անբաւ կենդանիք,
Եւ ոչք սոզան յընդերս երկրի,
Եւ թռչականք բազմազգի ։
Նախ բարձրայօն վերամբարձան
Լերինք քարանց շտեմարան,
Եւ թանդարանք բուսոց մրթեր
Ուստի կոփին աստուածք ձեր ”։
Զայն Քրիստոնեայ քաղցրաբարբառ
Որփէոսին քան ըզքնար,
Որ ըզաստիկ յորձանս գետոց
Յիւր կասեցոյց կընտընտոց,
Ի զգօնութիւն ածէր արագ
Ըզգազանաց բարս վայրագ,
Զ Ուրբանոսի զայրոյթ սրտին
Հանդարտեցոյց ձայն կուսին ։
Այլ ի սրտին բուն եալ վիշապ
Ըզզայրանաց խրզեալ կապ,
“Աղէ, ասէ, թէ կամ որով
Կախարդեցեր դու ըզծով ”։
Քրիստիանէ անդէն յայնժամ
“Կոյր դու, ասէ, և զառամ,

Հանուրց Հաստչին տուր վառս ընդ խս,
Եւ մի յիշեր բնաւ ըզդիս ։
Ծոմն այն եղև ինձ երջանիկ
Վերածնութեան տրւեալ կնիք ,
Ի գալրութիւն գըրեալ կենաց
Ջանուն հիքոյս անմոռաց ,, ։
„ Տարէք զաղջիկդ ապերասան ,
Արկէք , ասէ , յարդեալն ։
Խրցցի բերան վաղիւ նորուն ,
Ըզվէսն առնեմ ես նրկուն ,, ։
Առեալ տանին դահիճք ըզնա ։
Վառէր կամարն աստեղեայ ։
Վայրաբերեալ գոգցես լուսին ,
Փայլէր տիպար դէմք կուսին ,
Եւ 'ի զգեստուց հատանէր բոց ,
Որպէս արփին մէջ յամբոց
Լուսաճաճանչ վառեալ համակ
Նըշոյլ սրփուէ կարմրորակ ։
Ըզհետ երթայ անթիւ ամբոխ ,
Ի մէջ նոցուն զերթ յարդգող
Արծաթափայլ թողոյր ուղի
Հետոցն յառնուլ նաղելի ։
Գետնամածեալ երկրպագեն ։
Յաստուածուհեաց ոմն , ասեն ,

Ապրընջական ինչեալ առ մեզ,
Եւ հիւրանոց նա այսպէս »։
Հասեալ 'ի բանդ ըզդուռն աղխեն,
Ցըրուի ամբոխն համօրէն.
Եւ Քրիստինեայ շրթանց քընար
Վէ հագունիցն 'ի տիպար
Նըւագս օրհնից վերառաքէր,
« Ամենախնամ բարձրեալ Տէր,
Քո է երկին, քո է երկիր,
Հանուրց սահման դու եդիր.
Ի քէն աւուրք կենաց մարդկան
Ձափով, գիտեմ, կըշռեցան.
Կարճելըզկեանս կարող ես դու
Տիոցս յառոյգ խնամարկու,
Զի շունչս 'ի շունչ Աստուածութեան
Միաւորեալ յաւիտեան,
Զայս ես 'ի քէն, Տէր, պաղատիմ,
Քո եղեց միշտ, և դու իմ »։
Գիշերն 'ի կառս նստեալ սլանայր
' Նդ ոլորտս երկրի ծայր 'ի ծայր,
Խոր լըռութիւն պատէ զերկրաւ
Հանուրց արկեալ դիմակ սեաւ,
Աչք ծանրացեալք և Քրիստինեայ
Հարկէ 'ի քուն և ընդնա։

Բայց Քրիստինէ ոչ ննջէր անդ
Որպէս յերեկն և յեռանդ ։
Դատաստանի ահեղ պատկեր
Նա յերազն տեսանէր ։
Շքեղ տաճար անդ շափիւղայ
Սեանց կառուցեալ 'ի վերայ ,
Նըփրական սուրբ վարագոյր
Վերուստ 'ի վայր սևաթոյր
Սաւառնաթև 'ի հրեշտակաց
Կալեալ թռուցիկ կիսաբաց ։
Ականակուռ գահոյք ոսկի
Արկեալ շողայր 'ի միջի ։
Ուժգին հընչմամբ շեփոր հարաւ ,
Գըմբէթ յարկին վերացաւ ։
Եւ բարկացայտ էջ յեթերաց
Ի դէմս ահեղ էնն Աստուած ։
Բոյլք հրեշտակաց թօթափեցան
Ի մէջ յարկին ցիր և ցան ։
Բայց Միքայէլ իշխան նոցին
Կայր անդ կըշիռ 'ի ձեռին ,
Եւ սևաթոյր ահա ոգիք
Վըտիտ բազկօք կորովիք ։
Իրանք նոցին արձակէն բոց
Որպէս խանձողք դըժոխոց ։

Փուլթով ածէն անդ ոգի մի,
Եւ Ուրբանոս նըշմարի.
Պատկերն անշուշտ է այդ նորուն,
Ի կեղտ 'ի բիծ թաթաղուն,
Եւ բաբախէ մերկ և ունայն
Դատապարտեալ ոգին այն։
Որպէս ուժգին նետից տարափ,
Անդ լըռութիւն և սարսափ
Քաղեալ զոգին, թափ անցանէր
Ճապուկ ոգւոյն ընդ ներդեր։
Եւ 'ի կարճոյ ահեղ վըճիռ,
Ձէր պիտանի անդ կըշիռ.
"Զիս, Արարիչ, դու ոչ ծանեար
Քան զանասունս դու վատթար.
Զի՞նչ ըսպասես այլ տըրիտուր
Տարտարոսին քան ըզհուր"։
Յափըշտակեն ըզնա ոգիք,
Յաւէրժ վըհին ժանտ որդիք,
Ընդ աւերնեան դրունս համօրէն 3
Կարգ ըստ կարգի անցանեն։
Հրավառ 'ի լիճ հասեալ անցին,
Կարկառս ժայռից յահագին
Կախեալ յայերս ասի անտի
Հուր միաձոյլ նըշմարի,

Վայրն ամենայն թաղեալ 'ի բոց,
Անդ էր լսել վայ և կոծ.
Ականողիքն անդ չունէր զոյժ
Յահեղ տանջանան ապաժոյժ։
Քրիստիանէ աստէն զարթեաւ,
Գիտել ցանկայր հաւաստեաւ։
Անդէն Կիղէս ըզդիշերայն
Հասեալ 'ի բանդ գուժէր ձայն,
Թէ Ուրբանոս մեռաւ յանկարծ։
Աստ Քրիստինէ ձայն եբարձ,
"Ապա ոչ էր տեսիլս երազ,
Առ զարժանին պատուհաս"։
Ըզպատուհան, ասէ Կիղէս,
Ո՞հ Քրիստինէ, տեսի ես,
Մինչ սա ՃԵՄԷր վերս վայր 'ի տան
Զմահուն խորհեալ քո պայման,
Իբրև զառիւծ յանկարծ գոչէ,
"Մի՛ հարկաներ Քրիստինէ"։
Անկաւ 'ի վայր, ժայթքէ փրփուր,
Փարի զնովաւ պաղ սարսուռ.
Աչք բարկացայոյք, քարշեալ զալիս,
Գոչէ, փուլթով հարէք զնս։
Անկեալ յորսայս և գալարեր
Որպէս վիշապ կիսամեռ.

Սեաւ աղջամուղջ յաւէրժ մահուն
Ի գոյն գալկան հար համբուն։
Ե՛կ Քրիստինէ, Է՛կ երթիցուք
Դընել նըմա զյեսին շուք »։
Անդէն նըմին Քրիստինէ,
Մի՛ բուռն առներ, երթ ասէ.
Իմ Աստուծոյս նըւիրական
Յայս բանս նըստայց յաւիտեան
Մինչև ելից 'ի մարմնոյս ես,
Ոչ ելանեմ 'ի բանդէս »։
Երթայ Կիղէս 'ի տուն թախիծ,
Բայց սիրտ կուսին 'ի կսկիծ
Բախէր ըզանջ շուշանափայլ
Յեղերական ճախրել ջայլ.
« Ո՜հ Ուրբանէ, ըզքեզ ողբամ.
Լեղի դիպաւ քեզ այն ժամ,
Յորում գնացեր դու անկանել
Տարտարոսին վիհն յանել.
Ուր բորբոքմունք հրեղէն գետոց
Քամեն սրտէդ անդուլ կոծ։
Վա՜հ քեզ եղուկ, իմն Ուրբանէ,
Քո ելք զոսկերս սասանէ.
Ասացի քեզ, հիմ չանսացեր
Թողուլ 'ի բաց զաղանդ ձեր։

Ըզքեզ ողբամ Էս 'ի նանիր.
Ա՛յ հրեշտակն վերէժանդիր
Զայդ քեզ կնքեաց կենաց սահման,
Ոչ փոխեացի յաւիտեան։
Փառք և ամօթ, այսպէս ըզմարդ
Ի ձեր որսայք 'ի թակարդ.
Ընդ պնոտեաց փոխել զերկին,
Զայդ ձեր հընարք նիւթեցին։
Զքեզ, Ուրբանէ, թող ողբացեն
Ծառք անտառաց համօրէն,
Եւ քարանձաւք, յորժամ Եւրոս
Մրտեալ գոչէ և Նոտոս։
Զէզին ըզքեւ ծովուն կոհակք
Շիջուցանել ըզքո կրակ։
Այլ Էս ըզքեզ օրհնեցիս, Տէր,
Յորչափ կացցէ այդ էթեր,
Մինչև անցիս և Էս 'ի պար
Օրհնաբանիցդ անդադար։
Զայս ասացեալ զաչկունս փակէ
Իմ սրբափայլ Քրիստինէ,
Զի դեռ գիշերն ունէր զերկիր
Եղեալ կուսին կարեկիր։

# ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՅՆ

ՋԱՐԹՆՈՒԼ Քրիստինեայ և աղօթք. հասանէ մայր նորա ագաղգեայց, պաղատի դառնալ 'ի տուն. չառնու յանձն, յորդորէ զմայրն իւր թողուլ ըզդիս, չհաւանեալ գնայ։ Աբք հասանեն 'ի նորոգ կարգեալ դատաւորէն Դիոսէ և տանին զՔրիստինէ առ նա։ Հարցափորձութիւն նորա և պատասխանի կուսին. տանջանք ցերեկոյ և ապա բանտարկումն։ Աղօթք կուսին 'ի բանտի։ Դարձեալ խորհուրդ սադայէլի։ Յառաւօտուն հրամայէ դատաւորն ածել զկոյսն բռնի 'ի տաճարն Ապողոնի։ Աղօթիւք խորտակին կուռքն, և դատաւորն յանկարծամահ սատակի, զինուորքն պահեն զկոյսն 'ի բանտի։ Յուլիոս դատաւոր կացեալ ածէ զառաջեաւ զկոյսն, խօսի ընդ նմա և պատաս-

խանէ կոյսն. գազանացեալ արկանէ 'ի հնոց, բայց աղօթիւք անվնաս պահի նա պարեալ ընդ հրեշտակս։ Հրամայէ արտաքս հանել և թողջոք ի ժս արձակել 'ի վերայ կուսին. աղօթիւք զեռան ի ժք առ ոտս նորա, և 'ի զայրացուցանել թողջին զի ժս սպանանէն զթողջին, և աղօթիւք յարուցանէ զնա կոյսն։ Հրամայէ հատանել զբստին, և փոխանակ արեան կաթն բղխէ. հրամայէ տանել 'ի բանտ սպառնացեալ մահ։ Ածեալ 'ի բանտէն 'ի վաղուն, պարգևօք ճգնի խոնարհեցուցանել 'ի կամս իւր. և 'ի չառնուլ յանձն, հատանել հրամայէ զլեզուն. բայց կոյսն աղօթէ առ Աստուած բարձրաձայն։ Զայն յերկնից, էկ Քրիստինէ հանգիր. հրաման բռնաւորին խոցեալ սպանանել զկոյսն, և տիգաւորքն խոցեն զկողս, ուստի ելեալ հոգին թռչի յերկինս։

# ԿՐԻՍՏՈՆԵՐԱՅՆ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Ա՛ՆԵՊԵՍ զընթացս այն ինչ գիշեր
Փախըստական անկանէր,
Ահա թափեաց յաչացն ըզքուն
Քրիստիանէ սրբբասուն։
Զև արփենուոյն ափռեալ յերկիր
Զիւր ըզճաճանչ լուսասփիւռ,
Ի տուն բանտին քան զարուսեակ
Փայլէր կրկին արևակ.
Ոչ օրիորդ 'ի քայռ ոսկի
Կամ յառագաստ արքունի

Փայլէ պՃՆեալ, յանուր շղթայ
Ձրքնաղ դիմաք որպէս սա։
Ուժգին ձկտեալ մրտացն ըզթև
Գեր 'ի վերոյ քան զարև,
ԶԱստուածուԹեան ըզդահոյիւք
Կոխեալ զաստեղս ընդ ոտիւք,
Զայն արձակէ քաղցրաբարբառ
Սերովբէիցն 'ի տիպար.
"Որ 'ի դաբիր նստեալ հանդչիս,
Բարձրեալդ Աստուած, նայեա յիս.
Դու աքանչելեացդ հանդիսատես
Նստիս յերկնից յասպարէս.
Քև աշխարհի փոխի պատկեր,
Որպէս արարք 'ի Թատեր,
Քոյին կացեալ ակնարկուԹեանդ
Ամենեքեան պարաւանդ։
Ակնարկեա Տէր, եւյէ սատան
Ուրբանոսին այն փոխան.
Ի սէր սիրոյդ, ո՛վ Աստուած իմ,
Բոցակիզեալ տոչորիմ։
Տքնեցայ ես որպէս Ճընճղուկ
Ես 'ի բանտիս յայս անձուկ,
Եւ որպէս բու յաւերակի
Սիրտ իմ առ քեզ կողկողի։

Հանուրց Հաստիչ ըզքեզ ծանեայ
Սիրոյս միակ առարկայ" :
Մինչ Քրիստինէ պաշտէր նրւագ
Զառաւօտին այգունակ,
Ճառագայթիցն ընդ արևուն
Հանուրս սրտիւէր իւր անուն,
Ի յարքունեացն ոսկենրկար
Մինչ յաղքատին տաղաւար
Խանդաղատանս Ճրգունքն ածէր
Իմ Քրիստինեայ սրրբանուէր :
Սիրտ 'ի բերան ընթանային
Ի տես նորուն խրմբովին,
Սիրայորդոր ածել յողոք
Գուն գործէին մաղթանօք.
Բայց Քրիստինէ հրզօր բանիւք
Կոխէ զհրապոյրսն ընդ ոտիւք :
Հաս մայր նորա և Յանիկէ
Առ սիրելին Քրիստինէ.
Թախծեալ սրտիւ արտասուալից,
"Լէր ինձ, գոչէր, ցաւակից,
Դուստր իմ սիրուն լուր ինձ այսօր,
Մի եղիցես կամակոր :
Երկինք անգամ էլ ինձ գժխեմ
Հարեալ ցաւովք բազմադէմ.

Դըստրիկ սիրուն, Էկ Երթիցուք,
Քև փարատի այս իմ սուգ։
Անգին նշխար յՈՒրբանոսէ
Դու ինձ մնացեր Քրիստինէ.
Զքև արտասուք Էկ փարեցայց,
Եւ շինչանի սրտիս կայծ.
Մի՛ անտեսեր մի՛ զիմ լալիս,
Էկ Քրիստինէ գրկեա զիս »։
Ասա Քրիստինէ չքնաղ կուսան
Յողոք բանիցն անասան,
Զայն արձակեալ «Աւաղ, ասէ,
Քո արտասուացդ Յանիկէ.
Զարփին ունիմ այսօր վրկայ
Եւ ըզկամարն աստեղէայ,
Զիք յաշխարհի սէր և տանջանք,
Եւ ոչ մահուն այն վրտանգ
Զիս փոխեացէ յիմոց կրօնից
Եւ զՈղիւմպոս ընդ երկնից։
ԶԵղիւսեան դաշտ ես տարտարոս 1,
Դուք անուանէք Ողիւմպոս.
Ո՛հ, դեռք հրեղէնք անդ կարկաջեն,
Զեր կարծեցեալ վայելք չեն։
Անդ ընդ հրավառ ծաղկօք դաշտին
Վիշապք հրաշունչք գալարին,

Եւ բարկացայտ աչք բարձրեալոյն
Անդ փոխանակ արփենեւոյն
Ի հուր հնոցին զոյժ յաւելու,
Կացեալ ահեղ այցելու,
Եւ պաշտօնեայք իւրոյ ցասման
Դնէք բիւրաւորք յոտին կան,
Արքանեկեալ վրիժուց նորուն
Ուժով բազկաց աննրկուն։
Բայց մեր երկինք, 'ի շափիղայ
Են պատրաստեալ գրունք նորա,
Սիւնք կարկեհանք յայերս թռուցիկ
Շարեալ կազմեն ճեմելիք.
Զրգեն կամար բիւր ծիածանք
Յականց շողեալ բազմերանգ,
Հոտ անուշից վայրքն համբրէն
Յաւէժական անդ բուրեն։
Բախմունք լարից ճարտար մատանց
Հընչեն նրւագ գերազանց.
Անդ ոչ արփի և ոչ լուսին,
Լոյս է համակ այն երկին։
Անդ և մարդիկ, ոչ լոկ հրեշտակք,
Կազմեն ընտիր գումարտակ,
Ընդ դրօշակաւ ազգի ազգի
Շահատակեալ յաշխարհի։

Եկ զեմ հաւատ գրկեա ընդ իս
Թողեալ 'ի բաց զանգոյ դիս,
Զի եղիցուք մեք կենակից
Ընդ հրեշտակացն յաւերժից։
Վայելեսցէ Թող Ուրբանոս
Ի հրաբորբոքն Ողիւմպոս,
Եւ որք նորա սակի իցեն
Զահեղ վայրաց փորձ առցեն"։
Բանիւք նորա ոչ քաղցրանայ
Տագնապ սրտին Յանիկեայ.
Աճապարէ անմբևիթար
Ապողոնեայ 'ի տաճար։
Մինչ Քրիստինէ անդ 'ի բանտի
Զաւուրս այսպէս քանի մի
Նորոց կրօնից կացեալ քարող
Յուզէր ուժգին ըզՏիւրոս,
Ահա յանկարծ աղխք ճըռընչեն,
Դահիճք 'ի նեբքս արշաւեն.
"Եկ երթիցուք. 'ի Դիոսէ
Ա՛ռ քեզ, ասեն, հրաման է"։
Յափշտակեալ անդէն տանին.
Բայց Քրիստինէ խնդագին
Ակընկառոյց աչք 'ի յերթեր
Շողք պըսակաց նըշմարեր։

Մինչ ծառք ճրշդեն ըզհովանի
Յարփուոյն հարեալ ուղղակի,
Թեթև վազիւք միեղջերու
Սուրբ վըտակաց խուզարկու,
Բացուստ լըւեալ ըզձայն աղբերց
Գըլեալ լերանց բարձրաբերձ,
Շիջուցանել անդ զիւր ծարաւ
Ընդ ձոր ընդ սար քաջարշաւ,
Բայց ոչ հանդոյն իմ Քրիստինեայ
Տենչասիրեալ վազէ նա,
Ոյր տասպ սրտին արեամբ հովէր,
Զոր Տէրն արփուոյն վառեալ էր։
Որպէս երբեմն լերինն 'ի սայր
Փրկիչն 'ի մահ տենչիւ գնայր,
Համայն և սա չըքնաղ կուսան
Եկ Իշխանին յանդիման։
Սարսեաց ըզնա տեսիլ դիմաց,
Իշխանն անդէն լուռ եկաց,
Պահել ինքեան եդ 'ի մըտի.
Եկեալ 'ի վերս ընդ երկնի,
Զապա վայելս ածեալ 'ի յուշ
Շուրթըն շընթէր փաղաքուշ.
„Յիշխանական զարմէ ի՞նչ
Այսօր, ասէ, լըւայ ես.

Եւ տանջանաց դու չարաչար
Համբերեցեր վայրապար։
Տեսիլ դիմաց քոց գեղանի,
Ցոյց է խնամոցն հայրենի.
Ածցեն ըզքեզ խիստ պատուհաս
Զեռք օտարին թէ չանսաս։
Պաշտեալ ըզդիս դարձիր աղէ,
Մի՛ անսասեր Քրիստինէ.
Ապ՝ եթէ ոչ, 'ի դիս երդնում
Ածել տանջանս ապառում,
Յորոց երկինք կամ քոյդ Աստուած
Տեսցուք կորզէն յիմ ձեռաց"։
Քրիստիանէ գոչէ ասէն,
"Ա՜յ, հայհոյիչ անօրէն,
Օ՛ն տար 'ի բաց դու զանուն դից,
Ինձ մի լինիր կարեկից.
Սնոտի բանիւքդ ոչ պատրիմ ես,
Արդահատեա դու 'ի քեզ.
Զիս ոչ մեղկէ երկիւղ մահուն,
Եւ ոչ քոյդ փառք զաղփաղփուն"։
Իշխանն անդէն բըռամբ ըզնա
Եա հարկանել անխընայ,
Եւ Քրիստինեայ եկեալ զծաղու,
"Ընպառնալիքդ ահարկու

Ո՞ւր են, ասէ, զոր խոստացար
Ածել զինև, ասելիկար,
Ճակատ ուղղել մի՛ յանդգնիր
Ընդդէմ երկնի 'ի նանիր.
Թէ չունիս ոյժ կաց 'ի բացէ,
Իմ զօրավիգն Աստուած է.
Ըստ համարոյ համբերութեան
Պըսակք յերկինս ինձ շողան.
Այն որ պարտեաց զնմն Ուրբանոս,
Նոյն պարտեսցէ և զԴիոս՝՝:
Գոռոզն անդէն վառեալ 'ի սէր,
«Ներեմ համայն քեզ, ասէր,
Յայս ըստիպեալ միայն ըզքեզ
Զի աստուածոց զոհեսցես՝՝:
Կոյսն անվեհեր կըշռէ դարձուած,
«Ես Ճանաչեմ մի Աստուած,
Ոյր հրաշակերտ երկիր երկին
Արարք ձեռաց են նորին,
Ոյր յաջ ձեռին մըթերք գանձուց
Յորոց զրկեալ ես վաղուց,
Եւ յահեկին ահեղ շանթիք,
Սրտմրտութեանն արգասիք,
Զորոյ ըզփորձ առցես ընդ հուպ
Երբ ընկըրկիս դու 'ի գուբ:

Բայց չեն զարմանք թէ գու մոլիս
Պաշտել զանգոյ զանշունչ գիս,
Գոլով նոցա անուանակիր
Լինել կարծես անբասիր՝՝ ։
Թաւուտ անտառ վայր անմատոյց
Հանգոյն գազան ոչ սընոյց,
'Ի ոչ կատաղիք տարտարոսի
Տան ըզպատկեր Դիոսի,
Սալ երկաթի զերթ կասկարայ
Բերել դահճաց հրաման տայ,
«Հուր 'ի ներքոյ ուժգին արկէք
Ջեռուցանել զայն հրաշէկ՝՝ ։
Եւ բոկանի ըզկոյսն առին
Անդ 'ի վերայ կացուցին ։
Անբիծ կուսին իբր ըզգոհար
Վառէր ոտին գարշապար.
Ջերթ 'ի սեղան ողջակիզեր
Եւ ոչ 'ի հուր, այլ 'ի սէր.
Նըւագս օրհնից բազկատարած
Վերառաքէր առ Աստուած.
«Ես գոհանամ ըզքէն, Տէր իմ,
Զի միւս անգամ չարչարիմ.
Ընկալ զիմ սիրտ զոր ձօնեմ քեզ
Ջերթ զԱբելին ողջակէզ,

Եւ Սահակայ խոյին փոխան
Ես ծախեցայց յայս սեղան»։
«Աստուածք անգամ, իշխանն ասէ,
Գլեթան 'ի քեզ Քրիստինէ.
Ծանիր և դու ըզգուլթ նոցա
Զոհել նոցին արդ գոնեա»։
Քրիստինէ գոչէ անդէն,
«Ա՛յ, ամբարիշտ անօրէն,
Ընդ Քրիստոսի դու չերկընչիս
Ի կշիռ դնել զանչունչ դիս.
Այդ զօրութիւն է Աստուծոյս,
Ինձ ներգործեալ 'ի խրախոյս.
Բայց դու առցես զարժանահաս
Զանչէջ հրոյն պատուհաս,
Երբ երթիցես դու ժառանգել
Ըզդրժոխոց վիհս անել։
Այլ ինձ յերկինս շրքեղ պըսակ
Իմ ճգնութեանս փոխանակ,
Ընդ լուսերամ վեհագունից
Եղեալ յաւէրժ պարակից»։
Գազանացեալ իշխանն յայնժամ,
«Աղջիկ, ասէ, անըզգամ,
Բանք մեր ողոք եւուն օձան
Կալ մեր կամաց ախոյեան.

Սրամիտութեանս զինեալ ընդդէմ
Պատիր կրօնիւքդ, ո՛ դժխեմ։
Հրաման է ձեզ, մատիք, հիմ կայք
Արդարութեանս պաշտօնեայք »։
Անդ անողորմ ձաղկանս էդին,
Վիրաք լցեալ ըզմարմին,
Եւ ածելեաւ գերծեալ ըզհեր
Ըստ հրամանացն աննըւէր,
Մերկացուցին զհանդերձ նորուն.
Իրանն արեամբ թաթաղուն
Վէտ վէտ շողայր զերթ ծիրանի
Զանձամբն արկեալ հոլանի։
Ըզքաղաքաւն 'ի շուրջ ածեն,
Խրատին վոռոցք համարէն.
Անդ ՀԵՄ առնոյր կոյան անվրկանդ,
Շողեալ որպէս 'ի բահուանդ,
Արփափայլեալ շուրջանակի
Վառէր 'ի տիպ վարսամի։
Եւ համբարձեալ ձայն առ Աստուած
Ողորմագին արտասուաց,
« Ըզքէն, Տէր իմ Տէր, գոհանամ.
Մեծ ես Աստուած, մեծ քո խնամ,
Զոր յիմ վերայ ցուցեր ցայսօր
Աչովըդ քով մեծազօր։

Մինչ նատէի յաչաց անտես
Ի մէջ բրգան անշուք ես,
Հանդիսանալ ետ ինձ զարդիս
Յաշխարհախումբ քաղաքիս,
Ի հրաշացումն անուանդ մեծի
Թէ ես քո եմ յայտնեսցի։
Այո՛ քո եմ և եղէց, Տէր,
Մինչև կացցէ այդ ելեր՝՝։
Շտապեալ ճեպէր զընթացս արփին
Կարեկցելով ընդ կուսին.
Թողեալ զաշխարհ ծածկի ահա,
Վառի կամարն աստեղեայ։
Իշխանն անգուրթ ըզքրիստինէ
Տանել 'ի բանդ հրամայէ.
«Առ Ապողոն վաղիւ ածջիք,
Հատցի, ասէ, գատակնիք՝՝։
Փայլեալ մարմնով երթայր կուսան
Զերթ արուսեակն 'ի մրթան.
Ընդ կարճ ուղին հասեալ 'ի բանդ
Ըզքրիստինէ աղխեն անդ։
Ճախրեալ յաստեղս 'ի թևս հոգւոյն
Մօտ առ գահոյս բարձրելոյն,
Անգայթ մրտոք հրավառ սրտիւ
Կորովաբիւր զերթ արծիւ,

Ի ծոց Հաստչին սիրահարեալ,
Ուժգին ըղձիւք խոյացեալ,
Մըրմունջ 'ի սիրտ զեղու գանգատ
Հարան 'ի փեսայն սրտակաթ,
Թէ քայքայումն ընդէր չառնու
Մարմին հոգւոյս պահարկու։
Ու փեսային սիրապատար
Կացեալ այսպէս ընդ երկար,
Հալի 'ի սէր և թալկանայ,
Հա ամփոփէ քուն ըզնա։
Սադայէլի ահագնատես
Ձիգ յեթերին ասպարէս
Զաչս արձակեալ կայծակնացայտ,
Զօրէն արփւոյն ճառագայթ
Եռեալ ըզկոյսն աստուածամուխ
Շուրջ զաթոռով թագ 'ի գլուխ
Ախոյենին այն յաղթական,
Երկար ճրգանցըն փոխան։
Առեալ վրէին ցասմանն ըզմէտ
Երկնէր սարսափ ահափետ.
Յընդերս երկրի որպէս յորժամ
Հուր բորբոքեալ գամ քան զգամ,
Եւ անօսրեալ զօդն ընդ երկրաւ,
Գոգցէս հիւսիս և հարաւ

Անդ գալարեալ անդընդապտոյտ,
Սրանայ անդէն 'ի զայրոյթ,
Ահեղ թնդմամբ շարժէ զերկիր
Արկեալ զբնակչաք արհաւիր.
Սապէս սարսեաց, գումարեցան
Դիք տագնապաւ 'ի յատեան։
Գահոյք անդէն սարսափելի
Յանկարծ կանգնեալ 'ի միջի
Ահագնակերտ հարիւրդլեան,
Ի բիւր յեղեալ կերպարան,
Կազմեալ դիւացն 'ի հիւս ճարտար
Բելիարայ զայն դադար,
Դիք գահաւորք ըզհետ նորին
Ամենուրեք շրջէին։
Նստեալ անդէն իշխան նոցուն
Զայս բարբառի իւր զօրուն.
Գահակցութեանս վառեալ 'ի տենչ
Մեծաբանէր ոմն 'ի ձէնչ,
Ըզգիրգ կուսան կարծեալ թեթև
Ածել փակել ընդ ինև։
Քաջ ախոյեան ցուցեալ նորա
Ահա յաստեղս անցեալ կայ,
Անձնիւր ոսկէք հիւսեն պրսակ
Իւր ճգնութեանց մրցանակ,

Արագեցէք ըզմահ նորին
Մէն մի մըտեալ 'ի գործին։
Ի նախատինս մեր կեայ ցայսօր,
Ծաղրեալ զաջով մեծազօր"։
Ի գահոյեցն էջ զայրագին,
Անդարամեռք սարսեցին.
Ճապարէ իւրաքանչիւր
Յաջ և յահեակ 'ի գործ իւր։
Մինչ սեաթոյր սիգայր գիշեր,
Զակն իւր կառոյց 'ի յեթեր,
Տեսեալ զաստեղս յիւրեանց կայեան
Ի գոյն հարեալ 'ի դալկան,
Զի մի զգաղտնիս մերկէ արեգ
Փախչի սրանայ ահաբեկ,
Տարեալ ընդ իւր քուն և զերագ
Ի վիմասոյզ յիւր դարպաս։
Զփոշին ոտից մըրրկայոյզ
Այն ինչ թափեալ արշալոյս,
Նախկին ըզգեղն առնոյր երկիր,
Պըճնեալ 'ի զարդն իւր բնաձիր,
Հա և 'ի բանս մըտեալ նորա
Տալ ըզհամբոյր նախընծայ
Բեկբեկ լուսովն խանդակաթ
Աչաց կուսին անարատ,

Յարաւանունս մնալ, զարթնու
Պարզէ զչբրթունս օրհնեբգու.
«Դու որ նստիս յերկինս 'ի վեր,
Ամենակալ բարձրեալ Տէր,
Զերկնից բևեռ աջովդ ուղղես
Եւ զաստեղաց ըզհանդէս,
Զախովդ զերկրիս այս ահագին
Կալեալ ըզսանձն 'ի բըռին.
Զել և ըզմուտ քև արևակ
Ծանեաւ յերկնից պարունակ,
Լուսին նըմա զօր հանապազ
Պատրաստական կայ 'ի սպաս:
Քև ջրոք տարեբք ըծեալք 'ի մի
Զբդեն ըզկառս աշխարհի.
Փոխանակէ ձրմեռն աշուն,
Համայն ամառն և գարուն,
Մըռընչելով զալեաց խուժան
Քև թաւալէ Ովկիան.
Յաստեղատունս երբ ամբառնայ
Ըզքո հրաման յիշէ նա:
Ոչ հողմահոս աւազին կոյա
Զիւր խորտակէ ըզզայրոյթ
Քան ըզպարիսպ ահագնաժայռ
Հըզօր քո բ։նդ, Մինչ ցայդ վայր 2:

Խորտակեսցին ալիքդ 'ի քեզ
Երբ լեռնանաս փրփրադէզ։
Մեծութիւն քո մինչ յամբս երկնից,
Ըզքեզ յաւէրժ օրհնեցից"։

Մինչ Քրիստինէ զերկնից արքայն
Հանգոյն օրհնէր վաղորդայն,
Երաժըշտաց ընթանայ պար
Ապողոնեայ 'ի տաճար.
Եւ գիսաւոր անդէն նոխազ,
Զարդուք պըճնեալ մեծասպաս,
Առեալ տանին նըւիրական
Քուրմք պարաւորք 'ի մեհեան։
Փութան 'ի բանտ զի զայն հանցէ
Դից յողջակէզ Քրիստինէ։
Պերճ ընթանայր 'ի մէջ դահճաց
Սա քան զնոխազն 'ի քրմաց,
Պատրաստական տալ զանձն 'ի նուէր
Հանուրց հաստչին անվեհեր։
Ընդ պատուհանս ամբոխ ուժգին
Գոգ ընդ այերս տատանին.
Որպէս ցորեան հարեալ հողմով,
Հունձք ծածանին զերթ ըզծով,
Հանգոյն մարդիկ խրոնին ըզհետ,
Երթևեկեալ վէտ 'ի վէտ։

Հասեալ անդէն զօրէն արծուի
Ճախրէ 'ի ներս շեշտակի.
Եւ 'ի դիմաց սիրէր ճաճանչ,
Նոր արփենի հիւսքանչ։
Մերկէ զգաղտնիս մեհենական,
Եկեալ ռամկին յերևան,
Ոստայնք ձրգեալք անդ լայնագոգ
Զիւղ զաստուածոցն երեսաք,
Եւ մրճոտեալ նոցին կրկնոց
Թուին խանձողք դրժոխոց.
Եւ սևաթոյր որմունքն անլոյս,
Զերթ մշտավառ ծրխնելոյզ,
"Ահա ասա եմ, ձայն արձակէ,
Զի՞նչ կամիս դու, ո՛ Դիւ"։
Իշխանն անդէն Ապողոնեայ
"Ժամ է, ասէ, արդ զոհեա.
Ըզքեզ սիկին ինձ բարձակից
Բիւր ըսպասուք պատուեցից.
Ցայսվայր բարեաց երախտագէտ
Ցուցցես ըզքեզ այսօր գէթ"։
"Երախտագէտ եմ ես Հաստչիս,
Որ ցարդ պահեաց անփորձ զիս,
Որոյ երկինքդ այդ աստեղեայ
Ցաւիտենից գահ նորա.

Որ յոչընչէ զերկիր զերկին,
Միով բանիւ Եղեցին,
Արտակիտեաց իւրով լըրիւ
Հանուրց կնքեալ չափ և թիւ։
Եւ արդ դու, Տէր, ցոյց թէ ակրեա
Յերկնից նստեալ յասպարէզ.
Զըգեա զալ քո, աստուածք սոցին,
Յոր յուսացան, փըշրեացին.
Եւ ծանիցեն ազգք և ազինք
Քո են երկիր և երկինք։։

Փայլեաց յանկարծ լոյս փայլական,
Անդրիք յերկիր քանդեցան.
Ահագնագոչ բոմբիւնք անդէն
Հընչեն ըզվայրն համօրէն.
Ահեղ ճայթմամբ զերթ մայրեաց շար
Տապաստ արկեալ շանթահար,
Ապողոնեաւ հանդերձ Դիոս
Փոշի լուծան հողմահոս։
Խըցան շըրթունք չար իշխանին,
Եւ թափեցաւ թոյն լեզուին,
Եւ արհաւիրք մահուն անդէն
Պաղ զիրանամբ շուրջ պատեն։
Սոսկմամբ մեծաւ այր ընդ ընկեր
Այլագունեալ զայս ասէր.

«Մեծ է Աստուած քրիստոնէից,
Խաբք են անուանք մերոց դից»։
Վառեալ 'ի սիրտ եթերին բոց
Անդ երեսուն հարիւրոց,
Յիսուս անուն անդէն հընչէր
Յամենեցունց անվեհեր։
Ընդ այս հնչիւն բանայր երկին,
Գունդ լուսազգեացք պարէին։
Մարտիկ 'ի ռազմ ճեպէ անդունդ
Վառեալ յասպար և մրկունդ,
Կենաց կուսին գործել դարան
Օրէնս առեալ ցըրուեցան,
Իշխան վայրագ վաղվաղակի
Կարգել նախնոյն 'ի տեղի։
Շուրջ պարաւոր անդ ըզկուսիւ
Հաւատացեալքն յոգնաթիւ
«Ի բանտ 'ի մահ ընդ քեզ, ասէն,
Պատրաստ եմք մեք համօրէն»։
Անդէն դահիճք 'ի դէմն դժնեայ
Կորզեն ըզկոյսն անխընայ,
Որպէս զոչխար ընտրեալ 'ի զոհ,
Զատեալ հօտին 'ի միջոյ։
Մըտեալ 'ի բանտ 'ի սիրտ անդոյր
Տայր սիրահար բիւր համբոյր,

Ուր հետք հրաշից արիւնազանգ
Շողայր բանդին 'ի յատակ։
Ուժգին գոչմամբ անդ կողկողէր
Զակն իւր յառեալ ընդ երթեր.
« Բարձրեալ Աստուած ամենակալ,
Ըզպատանս իմ ընկալ.
Դու անկանես զամաց ըզչար
Հիւսեալ ըզլոյս ընդ խաւար.
Յաղթանակէ քեզ առաւօտ
Փայլմամբ արփւոյն անաղօտ։
Ըզդեղ դալար դու ըսփոփես
Ի ցոյց երկնի ամպագէզ,
Քեզ նորոգի բնութիւն համայն
Ի ցող երկնից վաղորդայն . . .
Թալկացելոյ սրտիս լեր դու
Երկնից ցողով կենսատու.
Ցերը յամես, Տէր, տուր ինձ հրաման
Վէհիդ լինել յանդիման.
Փեռեկեսցի երկնից կամար,
Զի զքեզ օրհնեմ անդադար »։

Մինչ սա այսպէս զգիշերն համբուն
Անցուցանէր անդ անքուն,
Նոր յիշխանէն դահիճք ահա
Խուժեն կուսին 'ի վերայ.

Որպէս վոհմակ արիւնախանձ
Կորզէն ըզգառն 'ի յըստեանց,
Հանգոյն սոքա մինչ աղօթիկեր
Հոգւով կուսանն ըզմայլէր,
Յափշտակեալ հանդէպ տանին
Յուլիանեայ իշխանին.
Ոյր դէմք ժպտեալ գեղոփն անդէն
"Բարեաւ, ասէ, գաս այսրէն,
Անմահ ծընունդ դու գեղանի
Յաւէրժ սիրոյ արժանի.
Քանի՛ նըւէրք ընծայեցան
Ապողոնեայ 'ի մեհեան,
Տեսիլ գեղոյդ յօրէ յորմէ
Յունկն իմ ազդեաց Քրիստինէ:
Ոչ հիմենեայ յոսկի սաղարթ 3
Փայլէ գըլուխ տարապարտ:
Շըքեղ պալատ զոր տեսանես
Քև զարդարի, գիտեմ ես.
Եկ վայելեա ինձ բարձակից
Շընորհ կալեալ անմահից":
"Շըքեղ պալատ զոր ես ունիմ
Անդըր ձըգի քան զշիրիմ.
Մինչ 'ի շիրիմ սահման քոյոյդ
Հանայն փառացդ երևոյթ,

Այլ ինձ յերկինս անմահ հրեշտակք
Անմահութեան կապեն թագ,
Ըստվեր վերացս աստեղց զօրէն
Ակնախրատիտ փայլեսցեն։
Ոչ փառք ոչ մահ, Յուլիանէ,
Զիս 'ի կրօնից ոչ դրդուէ.
Նախորդք քոյին զուր ճգնեցան,
Զերկնից առեալ փորձ ցաման.
Ի գլուխ քոյին առցես և դու
Թէ լինիցիս անարգու"։
"Խօսեա, Ներեմ, 'ի քո թակարդ
Ոչ ըմբռնես զիս, կախարդ.
Իմոց բազկաց ոչ յաղթեսցես
Քոյովքդ ելեալ 'ի հանդէս։
Խնայեմ 'ի քեզ, եկ զոհեա դից,
Բիւր ճոխութեամբք պատուեցից"։
"Ես թակարդեալ Յուլիանէ,
Ոչ լոկ ըզքեզ, կոյսն ասէ,
Այլ համօրէն ես կամէի
Ըզձեզ 'ի ծոց Քրիստոսի։
Ասացի քեզ. ընդ վայր ճգնիս
Յանմահ ձեռաց կորզեալ զիս,
Ողոք բանիւք մի զիս փորձեր,
Զիք ինչ հրզօր քան ըզսէր։

Թէ բիւրազգի մահ ըսպառնաս,
Կամ նորանոր պատուհաս,
Ունիմ յերկինս հանդիսադիր,
Զէ նա տեսող 'ի նանիր։
Շիթք արտասուաց թող թէ արեան
Տրիտուր զերկինս ընկալան »։
« Ոչ շիթ արեան ոչ արտասուաց
Տեսցէ այսօր քո Աստուած։
Հնոց ջեռուցէք վաղվաղակի,
Մինչ յամպս երկնից բոց հատցի։
Լուր Քրիստինէ, եկ վայելես
Երդումն ահեղ կնքեմ քեզ,
Մեծ տիկնուհեան տըւեալ անուն
Նատցիս յաջմէ իմ գահուն։
Մեծն Արամազդ մեր բարերար
Մեզ 'ի վայելս եռ զաշխարհ,
Առատաձեռն և աննախանձ,
Ոչ արգելս արկ և ոչ սանձ.
Յամենայնի սրտիդ փափաք
Օրէն լիցի քեզ անքակ,
Ոչ միայն Աստուած ձեր նախանձորդ,
Որ զգայութեանցդ անկըցորդ 4,
Զեզ 'ի մարմնի անմարմնական
Բերել ըզկեանս տայ հրաման։

Դարձիր հայեաց, ո՛րպէս ջրչէ
Հուր բորբոքեալ 'ի հնոցէ . . :
« Կեանք աշխարհիս, զոր վայելէք,
Կուսանն ասէ, ա՜յ դու հէք,
Ո՛րպէս սրանայ, հանգոյն ամպոց
Վատնեալ յուժգին 'ի հողմոց :
Ոչ Արամազդ և ոչ դիք ձեր
Երբ կանգնեցաւ տիեզեր,
Այլ մեր Աստուած, որ դահ նորա
Կամարն ահեղ աստեղեայ,
Շրջէ յոր կոյս և կամեսցի :
Ձիք ինչ յերկինս կամ յերկրի
Ձիք դիմադարձ կամաց նորուն,
Եւ խեռ տարերս տես նրկուն .
Յակնարկմանէն թափին շանթիք,
Աշխարհս նորին խաղալիկ .
Զոսկերոտի ցանէ մարդկան
Յերեսս դաշտի զերթ ցորեան :
Ձէ նախանձորդ որպէս լուտաս,
Կեանք մեզ կամի անբամբաս :
Վասն աշխարհիս ջրատեղծ ըզմեզ,
Աստեղց անցցուք 'ի հանդէս :
Յորժամ գայցէ 'ի թեւս հողմոց,
Ոսկերք ելցեն յանդընդոց,

Եւ շարեսցին այսպէս 'ի շար,
Անմահ ՀԵՌԱՑ գործ Ճարտար։
Միայն դիք ՀԵՐ, Յուլիանոս,
Լուծցին փոշի հողմահոս,
Փայտ քար կոփեալ 'ւ արծաթ ոսկի,
Ոչ շունչ ունին ոչ հոգի։
Այլ զարժանին դու առնուցուս,
Երբ շանթեսցէ ՏԷՐ Յիսուս։
Բայց արդարոց հոգիք թըռչին
Տարփմամբ մեծաւ 'ի մարմին,
Զերթ մըտերիմք զոյգ բացական,
Բաղում ամօք գաղթական,
Անակընկալ դիպեալ միմեանց,
Անդէն գրգանք խնդութեանց,
Անդէն հրաւէրք տացեն երկնից
Յաւէժական վայելից.
Վըշտացուցի, մարմին, ըզքեզ.
Եկ արդ փոխան վայելես,
Յաստեղատունս օն Ճախրեսցուք
Անմահութեան առեալ շուք։
Իսկ պիղծ ոգիք, ողորմ արկած,
Զըգին ըրուն 'ի դիւաց։
Անցնիւր անդէն յարձակեսցին
Դաղանաբար 'ի մարմին,

Պատառ պատառ յօշատեսցեն
Զիրանս իւրեանց շանց զօրէն.
Անիծեալ դու, այ մարմին խեռ,
Պատճառ կիզմանս դու եղեր.
Ես միայնակ ցարդ տոչորիմ,
Եւ դու հանդչիս 'ի շիրիմ։
Ի վայելիցդ ո՞ր շահ եղև,
Ճրգունքդ էլին 'ի դերև.
Դու վառեցեր ըզհուրն անշէջ
Օն այժմ ընդ իս և դու էջ։
Արդ 'ի հնոցէդ ոչ երկընչիմ,
Անտի 'ի ծոց ես թռանիմ
Ես իմ Հաստչիս, իմ Աստուծոյս,
Անմահութեամբ քաջայոյս"։

Դէմք բարկացայտ, "Ի հնոց արկէք
Գոչէ իշխանն ահաբեկ.
Խրցցի բերան անրզգամին,
Գուցէ աստուածք բարկասցին"։
Յափշտակեալ ըզկոյսն անդէն
Ի հնոց հրոյն արկանեն.
Այլ մրմռեալ բոցն 'ի հնոցէ
Արտաքս խակոյն արշաւէ,
Եւ լափլիզեալ ըզշրջակայս,
Անդրէն դառնայ յիւր 'ի կայս,

Շուրջ ըզկուսիւ փարեալ վառի,
Զերթ լուսասփիւռ ծիրանի։
Ցելուն երկինք, թռչին հրեշտակք,
Հընչէր անդէն այս նըւագ.
«Ըզքեզ Աստուած, ըզքեզ օրհնեն
Երկինք երկիր համօրէն.
Աստղէնըկար եթերին գունտ
Ըզքեզ ծանեաւ և անդունդ։
Դու խոնարհեալ, բարձրեալդ Աստ,
Զառնես անտես արտասուաց,
Եւ անմատոյց յալս սրբութեան
Նստեալ յաւէրժ անսասան,
Խեռ տարերաց սանձ արկանես,
Նոցուն տըւեալ ասպարէս։
Զըգես զաջ քո ամենուրեք,
Շանթահարին ահաբեկ.
Թէ խեռեսցին ըզգօնանան
Ըզփորձ առեալ քոյդ ցասման։
Ա՛ռ ջուրքն ըզնոյ, և 'ի Բաբել
Զերիս մանկունս ողջ պահել
Քո զօրութեանդ են արգասիք,
Եւ քեզ յաւէրժ դրուատիք։
Ըզքեզ Աստուած, ըզքեզ օրհնեն
Երկինք երկիր համօրէն»։

Զայն օրհնութեամբ ներքուստ 'ի բաց
Հընչեալ ուժգին նրաադաց,
Ըզպահապանն ահիւ մեծաւ
Հասոյց վիսին զառաջեաւ։
«Լրաւոր, Իշխանդ, ըզՔրիստինեայ.
Զէ միայնակ անդէն նա.
Լուսազգեցիկ ըզնովաւ պար
Փայլէ արփւոյն 'ի տիպար.
Ի հուրն անկէզ որ պահի ցարդ,
Հասարակաց չէ նա մարդ.
Օ'ն 'ի տաճար առեալ տարցուք,
Իբր անմահից դընել շուք»։
Գոչէ Իշխանն, «Ի՞բր յանդգնիք,
Դուք դրժոխոց ժանտ որդիք,
Ամենիշխան գիցն յաւերժից
Դընել ըզմարդ բարձակից։
Առէք այսրէն, սանդարամետ
Ցասմանս այսօր տեսցէ զմէտ։
Վազեալ խակոյն 'ի գուրս կորզեն
ԸզՔրիստինէ 'ի հնոցէն,
Ոյր գեղ գիմաց վարդից հանգոյն
Վառէր շողայր երփնագոյն։
Հոտ անուշից բուրեալ համայն
Որպէս շուշան վաղորդայն,

Բոլորածիր պարեն հրեշտակք
Բերեալ նրմին մրրցանակ։
Հեռոցն յառնուլ շող թօթափէր,
Տիպար արփւոյն 'ի յերթեր։
Հանդիսատեսք բախեն ըզլանջ
Այր ընդ ընկեր հիասքանչ.
Բայց դատաւորն անգուրթ գազան
Ի տես դիմացն հրաշազան,
Թափել ճրագնէր սրտին ըզթոյն
Ի սուրբ կուսան վաղագոյն։
«Վրհուկդ, ասա, ուստի՞ ուսար
Զայդ քո արուեստ բազմահնար.
Ապ' երթէ ոչ, այսօր տեսցես
Ուժոյս իմոյ ըզհանդէս։
Կախարդութի՞ զերծցիս, տեսցուք,
Կորզեալ անձինդ և զայդ շուք»։
Աստուածարեալ դիմաք յայնժամ
Կոյսն գոչէ, «Անըզգամ,
Ուր մատն երկնից հրաշագործէ,
Անդ քո բազուկ ոչ զօրէ։
Զօրէն գայլոյ ըստ անուան քում
Կամիս մընալ ապառուամ 5.
Այլ քաջ հովիւն ահա Յիսուս
Զոչխարս արկեալ յիւր 'ի յուս,

Որ ոչ տացէ քոց Ճիրանաց,
Ցուցեալ զհանդէս վեհ բազկաց»։
Վարսք 'ի գլուխս վէս իշխանին
Վարազաձև քրստմընին.
Արիւնացայտ աչքն 'ի Ճակատ
Վէր վայր թարթեն յուսահատ.
«Ելցեն, ասէ, հրաման է ձեզ,
Թովիչք լիժից 'ի հանդէս»։
Զոյգ մի հրաշունչ լիժից անդէն
Արիւնախանձ սողոսկեն.
Այլ շունչ նոցին մահահրաւէր
Ի սիրտ կուսին ոչ ազդէր,
Այլ ընդ ոտիւք մեռօրինակ
Գալարեցան զերթ պրսակ։
Բայց սատանայր վիսին հրաման
Լիժից գրգիռ տալ ցասման։
Թովիչն այն ինչ թովէր զնոսա,
Գլուխք նոցուն ամբառնայ,
Զերթ հատատաձիգ նեռ յաղեղանց
Լիժք ոստուցեալք մարդախանձ,
Զուլամբ թովչին փարեալ անդէն
Ըզթոյնս 'ի սիրտ կայլակեն։
Յանկարծ հարաւ 'ի գոյն գալկան,
Աչկունքն 'ի գուրս սորեցան,

Վարսից փոխան օձք գալարուն,
Տիպ Մեդուսեայ Ճակատուն 6.
Կապոյտ շրջթունք ցայտեն փրփուր,
Պատի զնուվաւ պաղ սարսուռ։
Գոչէ կուսանն հրաշէցն 'ի տես,
«Որ ահաւոր և մեծդ էս,
Հիմունք երկրի 'ի քէն սարսին,
Ըզքեզ ծանեաւ և երկին։
Տեսին աղինք թէ էս քո էմ,
Համայն սողունքս այս դժխեմ»։
Առ որս անդէն դարձեալ ասէ.
«Մի՛ մեղանչէք յայսմ հետէ,
Երթայք երբէք մի՛ խայթուածք ձեր
Ումեք լեցին մահաբեր։
Այլ դու ձայնի լուր աղախնոյս
Քո բարուեթեամբդ ընդաբոյս,
Ատուած բարձրեալ սքանչելագործ,
Քո գրթուեթեանդ առցեն զփորձ,
Թէ ըզկորուստ դու ոչ կամիս
Մեղաւորաց խրրև զիս։
Դարձո 'ի սա ըզչունչ կենաց
Դու Տէր հանուրց և Ատուած.
Յաստեղատունս նստեալ 'ի գահ,
Ի քեզ նային կեանք և մահ,

Կարող ես տէր կեանս պարգևել
Յասել հիքոյս , արի՛ Էլ . . . ”
Յարեաւ Էկաց մեռեալն խսկոյն
Կենդանութեան առեալ գոյն .
Ըզ Քրիստինեայ փարեալ զոտիք ,
“ Որ Էտ , ասէ , ինձ զայս սիք ,
Նա Ճշմարիտ Աստուած միայն .
Աստուածք ազգաց են ունայն ” :
Հաւատացեալ այրն 'ի Քրիստոս ,
Շրջէր քարոզ ընդ Տիւրոս .
Այլ մրուընչէր իշխանն անսասա ,
Դիւաց գերեալ զայն նրպատա :
“ Կախարդութիւնդ Էլ ընդ Երկիր .
Նէրեմ , ասէ , Էկ դարձիր .
Ա՛ռ քաղցրութեամբ պաշտել ըզդիս
Դու Քրիստինէ , գէթ զարդիս .
Քանիցս 'ի քէն բամբասեալ , տես
Նէրողամիտ գրտան քեզ ” :
Աստ Քրիստինեայ անժոյժ ոգին
Վառեալ 'ի սէր Անմահին ,
“ Ի՞նչ յանդգնիս այդքան , գոչէր ,
Զայդ բարբառել , ա՛յ վատշուէր .
Ըզզօրութիւնն հիմ՛ չիմանաս
Յիս նէրգործեալ հանապազ :

Հրաշեցս հանդէս քեզ եղկելոյդ
Պատիր թըւին երևոյթ.
Երբ ըղբըբօքդ մածցի խաւար,
Յայնժամ տեսցես բազկին կար.
Յաւէրժ վըհին հրավառ սահման
Երբ քոյդ լեցի սթեան՝՝:
Ահա անդէն դահիճք դըժնեայ
Խուժեն կուսին 'ի վերայ.
Ըստ հրամանացն անագորոյն
Յըստինս արկեալ ըզդաշոյն,
Յայտէ իսկոյն կաթն ընդ արեան,
Յամօթ դիմաց այն մարդկան:
Ո՜հ անողորմ անգութ մարդիկ,
Ի բնութենէ ոչ սարսիք.
Զեր սընընդեան սիրապատար
Զայն ամբարձեալ յուշարար,
Վրիժուց օձանս յերկինս յերկրէ
Յանմահ հոգւոց բողոքէ:
Այլ Քրիստինէ յերկինս 'ի վեր
Զաչս ամբարձեալ աղօթէր.
«Բեկեալ անձամբ ըզքէն, Տէր իմ,
Ահա դարձեալ շնորհ ունիմ,
Սիրոյ ընդ դոյզն այս արգասիս
Քո գըթութեամբդ հաճեսցիս.

Տէր իմ, ասցա մի համարիր
Տալ մեղանացն ըզկըշիռ »։
Արտասուաթոր աղօթք կուսին
Վառէն զցասումն իշխանին։
« Քոց յաղօթից յայսըմ հետէ
Ոչ օգտեսցիս, Քրիստոնէ.
Երդուեալ 'ի դիս, թէ ոչ զոհես,
Հանգիստ անձին ոչ գըտցես,
Ցորչափ շնչես դու կաթ մի սիւք
Եւ ես կեցից ընդ երկնիւք։
Տարէք 'ի բանդ ահա գիշեր
Զօրավիգն է գուցէ մեր »։
Առեալ տանին, 'ի տես նորա
Ամբոխ ուժգին ընթանայ.
Կէսք զարմացեալ ընդ գիրգ կուսան
Հասեալ յայդ չափ արուեստեան,
Այլք կարեկիցք ճըգանց նորին
Արտասուաթոր լինէին։
Զաչս ամբարձեալ կուսանն անդէն
Զայս բարբառի 'ի բանդէն.
« Լուարուք ինձ արք և կանայք,
Դուք յիմ վերայ առ ինչ լայք.
Ոչ համբերեմ ես վայրապար
Որպէս կարծէք հիւքաբար.

Շիլթ արտասուացս ոչ անկցի զուր,
Զերկինս առցէ տրտիտուր։
Իմ զօրութեամբս մի համարիք
Թէ ժուժկալեմ այսոցիկ,
Այլ խնամակալ աչք բարձրելոյն
Է զօրավիգն ինձ 'ի սոյն,
Հօր միածին 'ի մահ խաչի
Արեամբ հորդեաց զայս ուղի,
Ի նոյն շաւիղ ճեպիմ և ես
Յաստի կենացս ասպարէս։
Ահա տեսէք, որպէս ըստուեր
Թրուչին սրանան այս կեանք մեր.
Բայց հանդերձեալն անշարժ մընայ,
Որպէս կամարն աստեղեայ,
Եւ անհրաժեշտ առցուք անդէն
Մերոց գործոց փոխարէն։
Պաշտօնատարքք անրզգայ դից,
Եւ որք կեցին մեղսալից
Դատ ընկալցին նոյնօրինակ
Յաւերժ վրէին ըզկրակ.
Ես մինչ ոսկերքս այս 'ի շիրիմ՝
Ո՜հ, մինչ անկցին չարչարիմ՝՝։
Խօսիցս սորա լուեալ բազմաց,
Եւ դաւանին զԻնն Աստուած։

Զօրէն վագէր վառեալ 'ի հուր
Վայրագ իշխանն ընդ այս լուր,
Ահասարսեալ ածեալ ըզնա
Դահճացն խսկոյն հրաման տայ.
Զոր և գրտեալ 'ի տուն բանտին,
Ի գուշս անկեալ 'ի գետին,
Ելեալ օրհնից բազկատարած
Վերառաքէր առ Աստուած:
Հա վերամբարձ 'ի թռիչս առնուն,
Որ գոգ 'ի տիպ արևուն,
Ճաճանչ սրփռեալ յուղին փայլէր
Ընթացաղ մարմնո

Զեր փրկութիւն առ Աստուած քեզ
Դատաստանացն 'ի հանդէս,
Ի ծոց յաւէրժ անկցիս մահու,
Թէ ոչ ըզդիս թողցես դու,
Զիս ոչ մեղկեն փառաց հրապոյր,
Կամ ձայն մահուն անհամբոյր,
Անմահութեամբ քաջայոյս եմ
Առեալ զերկինս լուսաձեմ.
Այլ քեզ խաւար տարտարոսին
Յաւիտենից քոյդ բաժին »։
Աստէն գոռոզն ուժգին գոփմամբ
Որպէս Եւրոս հանէ զամբ,
Որոտընդոստ գըլէ բարբառ,
Հանգոյն ամպոց շանթահար.
« Հատցի լեզուն ապերասան
Հայհոյութեանցըն փոխան »։
Որպէս յորժամ գայլոց վոհմակ
Յափըշտակեալ զոչխարակ,
Քարշեն 'ի վայր մըռընչելով
Շուրջ պարաւոր ըզգըլխով,
Յարիւն համակ ցըռուկք նոցին
Յական քըթթել նեբկանին,
Յարձակեցան հանգոյն սոքա
Անբիծ կուսին 'ի վերայ.

Գետնատարած 'ի մէջ առնուն
Ի դուրս կորզեալ ըզլեզուն,
Ոմն առամամբ անագորոյն,
Եւ միւսն արկեալ ըզդաշոյն,
Արիւնացայտ հատեալ 'ի բաց
Ճըգնին կորզել յիրերաց.
Այլ Յիսուսի զանուն հընչէր
Հատոր լեզուին սրբանուէր։
Եւ Քրիստինէ արիւնթաթաւ
Իսկոյն յոտին կանգնեցաւ,
Անբիծ շըրթամբք արիւնաշանգ
Օրհնէր զԱստուած անսայթաք,
«Դու Աստուած իմ, դու առ ընթէր,
Ի սկըզբանէ միշտ կացեր,
Յառոյգ տիոց քեւ զերծայ ես
Յանթիւ ճըգանցս 'ի հանդէս,
Եւ արդ հանգո՛, բարձրեալգ Աստ,
Յաւած հոգիս անձկայրեաց,
Կենաց իմոց ինքեալ վախճան
Տուր ինձ ըզքեզ յաւիտեան,
Օրհնաբանիցգ անցեալ 'ի դաս
Քեւ ցնծացայց հանապազ»։

Ընդ այս բարբառ անդէն փայլեաց
Լոյս փայլական յերթերաց,

Սահման երկնից զիւր ըզպատկեր
Գոգցես յերկիր նրկարէր.
Եւ հինաւուրցն անդէն Աստուած
Ահեղ յօնիւքն ակնարկեաց.
Ըզգաց դրժոխք ըզմէտ ցասման,
Եւ սիւնք երկրի շարժեցան,
Բոմբիւնք ձայնից հընչէն բարբառ
Թափօր լերինն 'ի տիպար.
„Եկ Քրիստինէ, եկ վայելեա
Զերկնից կամարն աստեղեայ,
Այսքան վըշտացդ եմ կարեկիր,
Նստեալ յերկնուստ մարտադիր,
Յանմահ Ճակատդ ա՛ռ ըզպըսակ
Քոց Ճըգնութեանց մըրցանակ՝՝:
Կարկատեցան երկինք անդրէն.
Այլ դատաւորն անօրէն
Մըռընչելով ըզՔրիստինէ
Տիգօք խոցել հրամայէ.
Զոյգ տիգաւորք ըզկող կուսին
Գազանաբար խոցեցին:
Անկաւ 'ի վայր կուսանն խակոյն,
Որպէս 'ի սայր գերանդւոյն
Հատեալ շուշան և թալկանայ,
Հանգոյն և դէմք Քրիստինեայ:

Ահեղ ցոլմամբ յերկնից անկաւ
Լոյս մեծ փառաց ըզնովաւ։
Ահա տանին անմահ հրեշտակք
Զիմոյ տաւղիս նրպատակ,
Թըռիչք ոգւոյս որով վարէր . . .
Հէք երաժիշտ արդ լուռ լեր,
Մատն հարկանեն վեհ նուագածուք,
Թող մըտադիւր զայն լուիցուք։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

## ԱՌԱՋԻՆ ԵՐԳՈՅՆ

1 · Երկինք պատմեն զփառս Աստ։

2 · Վասն զի ստեղծան կուսանք որոշեալ էին 'ի գործ պաշտաման տաճարին Կիբեղեայ։

3 · Տեսեալ էր 'ի մանկութեան զչարչարանս վկայիցն առ դատաւորութեամբ հօր իւրոյ։

4 · Ապա ժամանակաւ տաճար ասի կառուցեալ 'ի տեղի աշտարակին 'ի պատիւ կուսին։

5 · Ասա զառաջինն յիշեցաւ անուն կուսին · զի 'ի տեսլեան եդաւ անուն նորա Քրիստիանէ և 'ի ծնողացն Քրիստինէ առնայնէր։

6 · Հազարապետ տան և սիրելի Քրիստինեայ։

7 · Լուեալ թէ ցանկայր գալ առնս յառաջ քան զվախճան իւր, և թէ անշուշտ զքրիստոնէութիւն յանձն առեալ 'ի միասին նահատակէր, վասն այսորիկ ուժգին ողբայ զնա։

8 · Կամենա, մին յինն Մուզայից։

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳՈՑ

1. Անթաղ մնացեալն առ հեթանոսս չմտանէր յՈղիւմպոս, այլ միշտ ճեմէր թափառէր առ ափամբ գետոյն։

2. Ի Գաբրիէլ հրեշտակապետէ մըկըրտեալ ասի 'ի գիմաց Քրիստոսի, ընդ որ մեք այսպէս պատշաճ դատեցաք անցանել։

3. Դրունք աւերնեան, դրունք դժոխոց։

## ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

1. Եղիսեան դաշտք, յորս բնակէին հոգիք իբր յարքայութեան ըստ հեթանոսացն առասպելեաց։

2. Ակնարկի բան Յովբայ, «Ասացի ցայդ վայր եկեսցես... 'ի քեզ խորտակեսցին ալիք քո»։ ԼԸ. 11.

3. Հիմն, Աստուած հարսանեաց։

4. Աստուած ձեր չունի զգայութիւն, ասէ, անմարմին գոլով։

5. Οὖλος ՝՝ԼՈՒ՝՝, այսինքն է ջալ, վնասակար, ածական գայլոց և այլոց գազանաց։

6. Մետուսա ոսկեգէս, այլ պատժեալ յԱԹենասայ փոխարկին վարսք նորա յօձս։

7. Ժամ առեալ գուցէ փոխեսցի 'ի խորհրդոց։